




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

- 136 =



ՀՈՒՍԵՐՉԵԿ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Վ ա զ մ ե ց

ՍՏ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. Կոմիտաս

1925

18-37
691. 29 SEP 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴ. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ԼՈՒՍԱՐՁԱԿ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Կ ա զ մ ե ց

ՍՏ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926 թ.

Ջ Մ Ե Ռ Ը Մ Ե Զ Ն Ո Ւ Մ



111-222294

1. Տոն.

Մեր դպրոցի առաջին բաժանմունքն այբբեն-
նարանն ավարտել եր. պետք է տոնեյին: Դասարա-
նը լավ զարգարեցին. պատերին պլակատներ կըպ-
ցըրին. Լենինի նկարը կախ տվին: Աշակերտների
աշխատանքները սեղանների վրա եյին, վոր յեկող-
ները տեսնեն:

Շատ մարդիկ եյին յեկել—ծնողներ, քույրեր, յեղ-
բայրներ, կոմսոմոլներ, գյուղխորհրդի նախագահը:

Աշակերտներին կարգալ տվին. ինչ վոր սովորել
եյին ու իրենք գրել, կարդում եյին:

Դուրս յեկավ Զաքարը. զեկուցում տվեց: Ըն-
դունված են յեղել 41 անգրագետ յերեխա: Սո-
վորել են 40-ը: Մեկը հիվանդության պատճառով
դպրոց չի յեկել: Ուսումը տևել է 10 շաբաթ: Ամեն
մեկը յերկու տետրակ է գրել, յերկու մատիտ բա-
նեցրել. 6 եքսկուրսիա յեն ունեցել: Ամեն մեկը
հինգ վոտանավոր է սովորել: Թվաբանությունից
մինչև 10-ը բոլոր գործողությունները գիտեն:

Հետո մենք թերթիկների վրա ամեն մեկս գրե-
ցինք մեր անունը, ազգանունը, տարիքը, ծննդա-
վայրը: Վերջը խմբով վոտանավորներ ասացինք:

— Դուք ել այսպիսի տոն կազմակերպել եք:

— Գրեցեք՝ ինչպես անցավ ձեր տոնը:

2. Գրագետը.

Սուրիկը նստած եր սեղանի առաջ, գիրք եր
կարդում: Վարդանը մոտենում է ու հարցնում.

— Կարդալ գիտե՞ս:

— Գիտեմ,— պատասխանում է Սուրբիկը,— լավ եմ կարգում: Ավելի լավ կկարգայի, բայց կետերը խանգարում են:

— Ձեզ ել խանգարում են կետերը:

3. Ի՛նչպես յես կարդալ սովորեցի.

Գյուղխորհրդի նախագահի պատմածը.

(Կարգալու յե ուսուցիչը)

Յես 16 տարեկան եյի, դեռ կարդալ չգիտեյի: Նայում եյի խանութների ցուցանակներին, բան չեյի հասկանում. ուրիշները կարողանում եյին կարդալ. յես ամաչում եյի:

Մեր գյուղում մի ուսուցչուհի կար. մոտը գնացի:

— Ինձ ել կարդացրու,— խնդրեցի նրան:

— Ինչո՞ւ շուտ չես յեկել: Կսովորեցնեմ. մի քանիսին ել գտի՛ր՝ բեզ ընկեր լինեն:

Հնկերներ գտա. իրիկունները թագուն դասի եյինք գնում: Ամաչում եյինք:

Քանի դեռ վարժ չեյինք, շատ դժվար եր. մատիտը պինդ եյինք քսում, թուղթը պատռվում եր: Տառերը խրժվրժում եյին աչքներիս առաջ...

Յերկու շաբաթ հետո վարժվեցինք...

Մի ամիս հետո յես արդեն քիչ կարդում եյի:

Կարդալ իմանալն ինձ մի անգամ ազատել եմահից: Պատմեմ, լսեցեք:

Մի անգամ հիվանդանոց գնացի՝ ձեռքիս վերք կար: Բուժակը ինձ նստացրեց, ինքը դուրս յեկավ: Սաստիկ ծարավ եյի: Սեղանի վրա բաժակի նման մի բան եր դրած՝ ջրով լիքը: «Խմեմ»,— մտածեցի:

յես: Վերցրի բաժակը, տեսնեմ՝ մի թուղթ է կըպցրած, վրան գրած է ԹՈՒՅՆ.

Բաժակը շրթունքներիս եյի մոտեցրել, կարդացի թե չե՝ քիչ մնաց ձեռքիցս գցեյի: Բուժակը ներս յեկավ. տեսավ: «Այդ ի՞նչ ես անում, կթու՛նավորվես»... վախեցած ճչաց նա:

Թույնը վերցրի ու միտք եյի անում.

— Թե կարդալ չեյի իմանա՞, բանս բուրդ եր, պիտի մեռնեյի:

4. Ի՛նչ կխնդրեք գիրքը.

Ուսուցչուհին այսոր ասաց մեզ:

— Գիտե՞ք, մանուկներ, ձեր գիրքը ի՞նչ կասեր ձեզ, թե խոսել կարողանար: Նա կասեր.

Ինձ լավ պահեք.

Մեջտեղից չծալեք, կազմս կփչանա:

Գետին չգցեք, թե չե վոտնակոխ կլինեմ ու կպատռվեմ:

Թերթերի անկյունները չծալժեք:

Իմ մեջ մատիտ, գրչակոթ կամ դանակ չդնեք:

Կեղտոտ ձեռքերով ինձ չվերցնեք:

Չգցեք ինձ՝ ուր վոր պատահի:

Գիշերն ինձ դուրսը չթողնեք, չգցեք անձրևի տակ: Խոնավությունից յես շատ եմ փասվում:

Վոչինչ չգրեք կամ չնկարեք իմ մեջ:

Գրքի խնդրածը մեզ շատ դուր յեկավ. և մենք վորոշեցինք գրքի բոլոր խնդիրները կատարել:

— Ի՞նչ կխնդրեք տետրակը:

— Ի՞նչ կխնդրեք նստարանը, սեղանը:

— Ի՞նչ կխնդրեք դասասենյակը, մատիտը, գրչակոթը, և այլն:

5. Հայրը յեւ վորդիները.

Հայրը խրատում էր վորդիներին, վոր նրանք սիրով ապրեն. բայց վորդիները չեյին լսում: Հայրը մի խուրձ ճիւղտներ կապեց, ասաց վորդիներին.

— Ո՞վ կկտորի այս խուրձը:

Վորդիները մեկ-մեկ փորձեցին, չկարողացան: Հայրն արձակեց ճիւղտները, ասաց.

— Մեկ-մեկ կտորեցեք:

Տղաները մեկ-մեկ կտորեցին բոլոր ճիւղտները: Այն ժամանակ հայրն ասաց.

— Դուք ել նման եք այս ճիւղտներին. յեթե միասին ու սիրով ապրեք, ձեզ վոչ վոք չի հաղթի. իսկ յեթե կովեք ու բաժան-բաժան ապրեք, ամեն մարդ ձեզ կարող է հաղթել:

— Ինչո՞ւ չեն բոլոր յերկրների բանվորները միանում:

— Դուք ի՞նչպես եք կարծում, մարդիկ պետք է միանան, թե վոչ: Ինչո՞ւ:

— Ի՞նչ միություններ գիտեք դուք:

6. Ինչ կարող է անել կողեկտիվը.

Մի անգամ Արմիկը կարդաց կողեկտիվ բառը, չհասկացավ ու մտածեց.

— Կողեկտիվը ինչ բան է:

Արմիկը հարցրեց ուսուցչին: Ուսուցիչը դեռ վոչինչ չասաց, դասից հետո աշակերտներին դպրոցի բանջարանոցը տարավ: Բոլորն սկսեցին աշխատել: Մեկը մարգերն էր փորում, մյուսը ջուր կրում, խոտերը փետում: Ահա այդ ժամանակ ուսուցիչն ասաց Արմիկին.

— Տեսնո՞ւմ ես՝ ինչպես բոլորս աշխատում

ենք: Մեկի համար այս աշխատանքը ծանր կլիներ, իսկ բոլորիս համար խաղ ու պար է. ես է, վոր կողեկտիվ է կոչվում: Գործարանի բանվորներն ել կողեկտիվներ ունեն. մեկ-մեկու ոգնում են:

Ձմեռ էր. շուտով ձյուն պիտի գար: Լևիկի մայրը հիվանդ էր: Արմիկը տեսնում էր, վոր Լևիկը հաճախ դասի չէր գալիս, դասերը չէր պատրաստում, փայտի յեր գնում: Արմիկի միտն ընկավ կողեկտիվը, ու ասաց ընկերներին.



— Լևիկը հայր չունի, մայրն ել հիվանդ պառկած է: Մենակ յե՞րբ պիտի կարողանա ամբողջ ձմեռվա փայտը բերել: Յեկեք կողեկտիվով ոգնենք:

— Գնանք, գնանք, — ձայն տվին յերեխեքը:

Հենց նույն օրը ճաշից հետո մանուկներն ամեն մեկը մի փոքրիկ պարան վերցրած՝ Լևիկի հետ խմբով անտառ գնացին, հավաքեցին չորացած ձյուղերը, կապեցին ու շալակներն առած՝ Լևիկենց տուն յեկան: Այսպիսով կողեկտիվը յերեք օրում ահագին փայտ հավաքեց:

Սրանից հետո Լևիկը վոչ բացակայում էր և վոչ ել անպատրաստ դասի գալիս:

— Ի՞նչ կողեկտիվ աշխատանք եք արել դուք:

— Ձեր ընկերներից վո՞րին կարող եք ոգնել ձեր աշխատանքով. ոգնեցեք նրան:

— Ձեր գյուղացիք ի՞նչ կողեկտիվ աշխատանքներ են արել. առու փորել, ճանապարհը նորոգել:

— Դրի առեք:

7. Ամեն մեկն աշխատում է բոլորի համար.




1. Ածուխ հանողները մտնում են խոր գետնի տակ, քարածուխ են հանում դարբնոցների, շոգեշարժիչների և գործարանների համար:

2. Դարբինն աշխատում է դարբնոցում, գերանդիներ, մանգաղներ, վար անողի համար խփեր և պատրաստում:



3. Աղմկոտ գործարաններում աշխատում են բանվորները՝ ջուլհակները, կաշեգործները, փականագործները և շատ ուրիշներ: Նրանք պատրաստում են ճոթ, մահուղ և ուրիշ կտորեղեն, կաշի և տեսակ-տեսակ մեքենաներ:




4. Հողագործ գյուղացին աշխատում է դաշտում, ճակատի քրտինքով հաց է ձեռք բերում: Աշնանը վոսկեհատ ցորենը ջրաղաց է տանում, ալյուր անում, քաղաք բերում: Քաղաքացիք առանց հացի ապրել չեն կարող. գյուղացու աշխատանքը նրանց շատ է պետք գալիս:



5. Գյուղացին ծախում է հացահատիկը, շուկայից գնում է՝ կտորեղեն, վոտնաման, գործիքներ. նա ել առանց քաղաքի բանվորների ապրել չի կարող:

Գյուղացին պետք է բանվորին, բանվորը՝ գյուղացուն:



6. Այս գրքի վրա աշխատել են գրաշարներն ու տպագրողները:

7. Ուսուցիչն աշխատում է դպրոցում, վորյերեսաները գրագետ դառնան: Յերեսաները սովոր-

բում են, վոր մեծանան, աշխատավորները դառնան:
Բոլորն աշխատում են:
Ամեն մեկն աշխատում է բոլորի համար:

-
- Նկարեցեք դարբնի և ուրիշ բանվորների աշխատանքը:
 - Նկարեցեք գյուղացու աշխատանքը:

8. Մեր գույր.

I.

Հենց վոր անասուններին կեր տալու ժամանակը գալիս էր, հայրիկս մարագն էր գնում, խոտ ու դարման շալակում, գոմը տանում: Յես էլ նրա հետ գնում էի՝ իմ Մարալին ու Ջեյրանին տեսնելու: Մի որ չտեսնեի՝ խելքս կգնար: Ափսոս, վոր մեր գոմը ցուրտ էր. խեղճ հորթերը դողում էին: Յերդիկը բաց, պատերը՝ քարուքանդ, կտուրը՝ տեղտեղ ծակծկված: Փաթաթվում էի մեկ Մարալիս վզովը, մեկ էլ՝ Ջեյրանիս, ուղղում էի տաքացնել. յերկուսի մերն էլ վննց էին մտիկ տալիս...

- Ապի, բա Մարալն ու Ջեյրանը սոված մնան:
- Հրես մերդ կգա, բաց կթողնի, կծծեն, կըկըշտանան:

Դարմանը ածում էր կովերի առաջ, իսկ խոտը ձիուն էր տալիս:

Խեղճ կովերն այնպես լղար էին, հազիվ էին վոտի վրա կանգնում:

II.

Մի անգամ գյուղատնտեսը յեկավ մեր գոմը:

— Ես ինչ ե, Սերոբ բիձա, — ասաց հորս, — անասունները մեղք չեն. դժվար բան է, վոր եղ ծակու-

ծուկը փակես՝ խեղճ անասունները չմրսեն: Մեկ էլ՝ ախր գոմը մաքուր կախեն, անասուններին տակը կչորացնեն: Մեկ-յերկու լուսամուտ էլ թող, վոր լույս լինի: Գոմը մաքուր ու տաք պահիր, են ժամանակ ամեն մի կովը 8 կիլո յուղ ավելի կտա:

Ե՛ղ եր ու եղ. հայրիկս գործի կպավ. ծակուծուկը փակեց, յերկու տեղ լուսամուտ շինեց: Անասունների տակն էլ դրանից հետո չորացնում էր: Տեսնեք ինչ կլինի:

-
- Ձեր գոմը տաք է, մաքուր է:
 - Գյուղացիներից իմացեք՝ ինչու պետք է գոմը տաք լինի:
 - Կավից կով, յեղ, հորթ, գոմեշ պատրաստեցեք:
 - Նկարեցեք ձեր գոմը:
 - Գունավոր թղթերից կով, ձի և ուրիշ կենդանիներ կարեցեք:

9. Նոր ոգնականը.

— Դիտե՛ս ինչ, հայրիկ. կամ դո՛ւ անտառ գնա փայտի, յես տանը մնամ, կամ յես տանը մնամ, դո՛ւ գնա անտառ փայտի:

-
- Դուք ե՛լ եք այդպես ոգնում ձեր տանը:

10. Ընտանի կենդանիներ յե՛վ վայրի գազաններ.

Ընտանի կենդանիներ՝

Ձի, կով, յեղ, գոմեշ, այծ, վոշխար, խոզ, կատու, շուն:

— Ուրիշ:

Վայրի գազաններ՝

Գայլ, աղվես, արջ, սկյուռ, նապաստակ, բորենի:

— Ուրիշ:

1. Ձեր տանը քանի՞ կով, ձի, յեղ և վոչխար կա:
2. Ընդամենը քանի՞ գլուխ կենդանի կա:
3. Քանի՞ հավ, բադ, սագ ունեք:
4. Ընդամենը քանի՞ ընտանի թռչուն ունեք:

1. Ձեր գյուղում քանի՞ կով կա:
2. Քանի՞ հորթ կա ձեր գյուղում:
3. Ընդամենը քանի՞ հորթ ու կով կա ձեր գյուղում:
4. Մի կովն որական ինչքան խոտ է ուտում:
5. Հինգ կովն որական ինչքան խոտ կուտեն:
6. Մի կովը հինգ որում ինչքան խոտ կուտի:

11. Ով ինչ է ուտում.

Ո՞վ է խոտ ուտում.

Կովը, եղը, վոչխարը: Ել հվ:

Ո՞վ է միս ուտում.

Շունը, գայլը: Ել հվ:

1. Ի՞նչպես պետք է ձին ջրել:
2. Ի՞նչպես պետք է ձին թիմարել ու մաքրել:
3. Ի՞նչ գույնի ձիեր կան:
4. Մի ժամում ձին քանի՞ կիլոմետր է անցնում:
5. Մարդը մի ժամում քանի՞ կիլոմետր է անցնում:
6. Յերկու ժամում ձին քանի՞ կիլոմետր կանցնի:
7. Իսկ մարդը:
8. Դուք մի ժամում քանի՞ կիլոմետր եք անցնում:
9. Տասը կիլոմետր քանի՞ ժամում կանցնի՝ վոտքով, ձիով:

1. Ձին վազում է. իսկ ո՞նք:
2. Վորդը սողում է. իսկ ծիծեռնակը:
3. Մողեսը սողում է. իսկ ձիակը:

4. Ուրուրը թռչում է. իսկ մորեխը:

5. Կատուն մլավում է. իսկ ձի՞ն, կովը, խոզը, վոչխարը, շունը:

Խոզի ձագը դռնի յե կոչվում, իսկ ձի՞ն, կովը, կատվը, շունը:

12. Քաջ տղան.

Մանուկների խումբն ուրախ-ուրախ դպրոց էր գնում: Առավոտյան ցուրտը կարմրացրել էր նրանց թշերը: Դատարկ փողոցում նրանց աղմուկն ու ծիծաղն էր միայն լսվում:

— Հապա ո՞վ ինձ կըռնի, — ձայն տվեց Արշավիրն ու սկսեց արագ վազել:

— Յես, յես... ձայն տվին մյուսներն ու վազեցին Արշավրի յետևից:

Հենց եղ միջոցին դարպասից դուրս վազեց մի գամփռ շուն ու նետվեց դեպի վազող յերեսեքը:

Բոլոր մանուկները պուկ յեկան ու փախան. միայն փոքրիկ Հայկակը կանգ առավ, մատը թափ տվեց կամացուկ ու քնքռել էր պոկ ասաց. «Կո՛ւտիկ, կո՛ւտիկ, տե՛ս, չկ՞ես ինձ համ, չկ՞ես»:

Շունը կանգ առավ ու դադարեց հաջելուց: Հետո պոչը ձոճեց, մոտեցավ Հայկակին ու քսվեց նրան: Հայկակը շոյում էր շան գլուխն ու պարանոցը: Պայուսակից հանեց մի կտոր հաց, գցեց շանը և վազ տվեց վախկոտ ընկերների յետևից, վոր փողոցի մյուս ծայրին կանգնած՝ մտիկ էյին տալիս:

— Նկարեցեք այս տեսարանը:

13. Հագուստի պատմությունը.

Դպրոցում պատմեցին, թե մարդիկ ինչպես սովորեցին հագուստ պատրաստել:

Շատ հին ժամանակներում մեր պապերը վայրենի կենդանիներ էյին վորսում, նրանց միան ուտում, իսկ մորթին հագնում ցրտից պաշտպանվելու համար: Այդ մորթիները կոպիտ ու անհարմար էյին: Ավելի հարմար հագուստներ իրենք կարող էյին պատրաստել, բայց դրա համար թել եր պետք:

Վորտեղից ճարեն. Այծի ու վոշխարի բուրդը յերկար ու փափուկ է. Մարդը մաքրեց ու վորտեց ձեռքերով: Այդպես սովորեց թել մանել ու թելերը հյուսել:

Վոշխարի բրդից ստացած թելը տաք զգեստ եր տալիս, ձմեռն եր պետք գալիս. իսկ ամառվա զգեստի համար մարդն ոգտվեց վուշի և կանեփի թելերից:

Աշխատանքը ձեռքերով դանդաղ եր կատարվում. Մարդն սկսեց մտածել, հնարեց կտորներ գործելու մեքենան, վորը այժմ մեզ համար տմեն տեսակի կտորեղեն է պատրաստում:

- Հագիդ շապիկն ինչից է:
- Ձեր գյուղում կտորներ գործում են:
- Ինչից են գործում:
- Ձեր գյուղում վուշ կամ կանեփ ցանում են:
- Նկարեցեք զանազան հագուստներ մորթուց և կտորից:
- Նկարեցեք ձեր գյուղի հագուստները:

14. Ճախարակ.

Մանիք, մանիք, իմ ճախարակ,
լիսեռնիկդ պտտիր.
մանիք թելեր հանստ ու բարակ,
իլիկիդ վրա փաթաթիր:

Ձեթ եմ ածել ականջներդ,
նոր շինել եմ շրտվիկ,
դեհ, շուտ շարժիր լայն թևերդ,
վոստեր շինիր սուրբուկիկ:

- Ձեր գյուղում ճախարակ գործ են ածում:
- Ուրիշ ինչո՞վ են թել մանում:
- Ի՞նչ են գործում թելից:
- Ել ի՞նչով կարելի յե կտոր գործել:
- Եթևիլուրսիա կատարեցեք դեպի մոտակա ջուհականոցը, կտորի գործարանը, ծանոթացե՛ք նրանց աշխատանքին:

15. Մենակ կապրեմ.

(Կարդալու յե ուսուցիչը)

— Պետք է փախչեմ ձեզնից, մենակ ապրեմ, մեն-
մենակ, թող վոշ վոք չլինի, անապատում կապրեմ.
ձեզնից ձանձրացել եմ, ձանձրացել բոլորիցդ,—բղա-
վում եր, գոռում ութ տարեկան Պետիկը, նա կռվել
եր իր քույրերի, յեղբայրների հետ:

Պետիկը կռվարար եր, ուզում եր՝ միշտ իր ա-
սածը լինի, վոշ վոքի չեր լսում:

— Միշտ կռիվ ես անում. մի ասա՝ տեսնեմ
մարդկանցից հեռու վո՞նց ես ապրելու,—ծիծաղելով
ասում եր հայրը,—մի տեսնեմ, թե դու վորտեղից
ես կերակուր ճարելու, եզ շորերդ վոր պատուեն,
մաշվեն, նորն ո՞վ կտա քեզ:

Պետիկը կատաղած էր, գաղաղած:

— Անտառում պարուկներ կուտեմ... քիչ փող
ունեմ... հաց կառնեմ:

— Ուրեմն մարդկանցից կառնես. հացը մարդիկ



են թխում. իսկ վոր ցուրտը սեղմի, ուր կգնաս, գայլի բռնը կմտնես:

— Յես... յես... կգնամ... կգնամ ելի,—կմկմաց Պետիկը:

— Ձե, առանց մարդկանց յուր չես գնա, սիրելիս. մենակ այս աշխարհում ապրել չես կարող: Դե լավ, լաց մի լինի, արի խոսենք:

Պետիկը մոտեցավ հորը:

— Դե արի տեսնենք՝ ով քեզ համար ինչ է արել. այ, ես քո նոր կոշիկները վորտեղից են:

— Կոշկակարն է կարել,— շշնջաց Պետիկը:

— Լավ, իսկ քո փայտե ձիւն, վորի համար դու մեծ աղմուկ բարձրացրիր:

— Վարպետ Սիրաբն է շինել. նա խաղալիքներ է շինում, ծախում:

— Այ, յերկու մարդ արդեն քեզ համար աշխատել են: Հիմա շուրջդ նայիր. յես իրերի անուանները տամ, իսկ դու ասա, թե վոր արհեստավորը ինչ է շինել, կամ վոր իրը գործարանից է դուրս յեկել:

Պետիկը լացը մոռացավ: Հոր ասածը դուր յեկավ նրան:

Յերկու մեծ յեղբայրներն էլ մոտեցան ու սկըսեցին խոսել, թե վոր իրն ով է պատրաստել:

— Դուք էլ փորձեցեք իմանալ՝ ձեր շրջապատող իրերը ով է պատրաստել:

— Ինչո՞վ է պատրաստել:

— Ինչի՞ց է պատրաստել:

— Նքսկուրսիա կատարեցեք մոտակա հյուանոցը, դարբնոցը և ուրիշ արհեստանոցներ:

16. Գյուղից քաղաք.

(Կարդալու յե ուսուցիչը)

— Եգուց գնում եմ քաղաք,—ասաց Գասպարը Աւոնին,—կարտոֆիլ, քյալամ եմ տանում. Մադին ու Սաքոն յերկու սալ փայտեղեն են պատրաստել, անիվ, սունի. նրանք էլ են գալիս. ուզում ես, արի միասին գնանք:

— Հա, յես էլ ածուխ եմ տանելու, փողի պետք ունեմ: Քանի ճանապարհը բաց է, գնանք, թե չե հետո ուշ կլինի:

— Հայրիկ ջան,—ասաց Գասպարի աղջիկը,—մեզ համար քաղաքից նոր գրքեր կըբերես և Լենինի պատկերը կարմիր անկյան համար:

— Ինձ համար գյուղատնտեսական գրքեր բեր. կարտոֆիլի մասին, թե վոնց մշակենք, վոր շատ բերք ստանանք:

— Կովերի մասին էլ գիրք կա, թե ինչպես պահենք, վոր շատ կաթ տան — չմոռանաս, բեր:

— Լեոն, գրի, վոր չմոռանանք. իմ միտը բան չի մնում,—ասաց Գասպարը:



Յերկար ճանապարհ անցան. հասան Յերևան. բերածը ծախեցին, կոոպերատիվից առան ինչ վոր պետքն էր. էլ կոշիկ, գլխարկ, չիթ ու շալ, վեդրո, լամպ—ամեն ինչ սուան: Գրքերն էլ չմոռացան. Պետրատի խանութից իրենց ուզած գրքերը, նկար-

ներն առան: Գասպարը տեսավ որացույցը, չհամբերեց.
— Ես ել առնեմ. տանը չորս սովորող կա. թանգ
ե, բայց ինչ արած, առնեմ, յերեխեքը շատ կուրա-
խանան:

-
- Ձեր գյուղից ինչ են տանում քաղաք ծախելու:
— Քաղաքից ինչ են բերում ձեր գյուղը:
— Քաղաքն առանց գյուղի և գյուղն առանց քաղաքի կարող
են ապրել:
— Ինչո՞ւ չեն կարող:

17. Առաջին ձյունը

Վալ, մայրիկ ջան, տե՛ս,
բա՛կն ու դուռը լի,
ինչքան սպիտակ
թիթեռ ե գալի:
Եսքան շատ թիթեռ
չեմ տեսել յես դեռ:
— Ձե, իմ անուշիկ,
թիթեռներ չեն եդ.
Թիթեռներն անցան
ծաղիկների հետ:
Եդ ձյունն ե գալի,
փաթիլն ե ձյունի,
վոր կարծես սպիտակ
թիթեռնիկ լինի:

18. Մեր որսառետրից.

Այսօր մենք վորոշեցինք դիտել ձմռան գալը.
Կենդանի անկյան հերթապահները պետք ե դիտեն
ու գրեն, թե՛

1. Յե՞րբ ե առաջին ձյունը յեկել.

2. Յե՞րբ ե սառել գետը.

3. Ի՞նչ թռչուններ են մնում ձմռանը մեզ մոտ.
4. ուրիշ շատ բաներ:

Նրանք պետք ե դիտեն, գրեն ու պատմեն բո-
լորիս:

19. Վերնակր.

Ձյունի բյուրեղներն ընկնում են գետին: Ծած-
կում են գետինը սպիտակ փափուկ վերմակով: Ի՞նչ
տաք ե սերմերի համար. հողում, ձյունե ծածկոցի
տակ. այնտեղ չեն մրսի:

Կգա գարունը, ձյունի բյուրեղները կհալչեն,
ջուր կդառնան:

Սերմերը ջուր կխմեն, ծիլեր կարձակեն: Խոտեր,
ծառեր ու ծաղիկներ դուրս կգան:

20. Մեր կազմակերպությունը.

Ընդհանուր ժողով արինք:

Որապահների համար կանոններ մշակեցինք.

I. Առավոտները բաց անել ողանցքները:

II. Կավիճ պատրաստել, թանաքամանները թա-
նաք լցնել:

III. Դասամիջոցին հետևել, վոր աշակերտները
դուրս գան բակը:

IV. Դպրոցի ծաղկամանները ջրել:

V. Դասերից հետո դասարանը կարգի բերել:

— Դուք դասարանում կազմակերպություն ունե՞ք:

— Դասարանական կոմիտե—դասկոմ ունե՞ք:

— Ի՞նչ ե անում ձեր դասկոմը:

21. Դասից ուշացող աշակերտը.

— Արմիկ, վե՞ր կաց, ուշ ե արդեն, — մայրն արթնացնում էր տղային:

Արմիկը վեր կացավ, լուսամուտից դուրս նայեց, տեսավ՝ ընկերները դպրոց են շտապում:

— Շուտ, մայրիկ, հաց տուր, ուշացել եմ:

— Բա չե՞ս ամաչում, մի լվացվիր, յերեսդ մաքրիր, մրի մեջ կորել ե. մազերդ չես սանրել:

— Ժամանակ չունեմ, դպրոցից կուշանամ:

Արմիկը դպրոց վազեց. դասն սկսվել էր. աշակերտները նայեցին Արմիկին, ծիծաղները բռնեց:

— Տեսե՞ք, տեսե՞ք մի, Արմիկը վճնց ե յերեսը մրոտել:

— Յերեսը նախշել ե, նախշել:

— Բա ձեռքերը:

— Հապա մեկ ձեռքերդ ցոլյց տվե՞ք, — ասաց ուսուցիչն աշակերտներին: — Տեսնե՞մ ձերը մաքուր ե:

Յերեխեքը թազցրին իրենց ձեռքերը:

— Դասերից հետո, — ասաց ուսուցիչը, — ժողով կանենք ու կվորոշենք, թե ինչպես կովենք անմաքրության և ուշանալու դեմ: Իսկ դու, սիրելիս, գնա՝ նախասենյակ, յերեսդ ու ձեռքերդ լվա, սանրվիր, հետո դասի յեկ, — ասաց նա Արմիկին:

Քիչ մնաց, վոր Արմիկը լաց լինե՞ր: Բայց ի՞նչ արած, ինքն էր մեղավորը, պիտի լսեր...

— Ձեր դասարանում ել դասից ուշանում են:

— Ի՞նչպես եք կովում դրա դեմ:

— Ի՞նչպես եք հետևում ձեր ընկերների մաքրությանը:

— Դպրոցում լվացարան ունե՞ք, վոր խաղից հետո ձեր կեղտոտած ձեռքերը լվանաք:

22. Աշխենի գիրքը.

I

Գաբո բիձեն չեր թողնում, վոր Աշխենը դպրոց գնա:

— Աղջիկն ինչ, կարդալն ինչ. յես վոր ուսում չեմ առել, պակաս մարդ եմ, — ասում էր նա:

Վերջը մի կերպ թողեց:

— Յերեխեք, վաղը այբբենարաններ կառնեք, կամ փող կբերեք, յես քաղաքում կառնեմ, — ասաց ուսուցիչը:

Աշխենը տուն յեկավ. հորից վախենում էր. իրիկունը մորն ասաց. «Վախում եմ՝ ապիին ասեմ, դու ասա՝ գիրք առնի»: Մայրն ասաց հորը:

— Ձե մի հլա փող ել տամ, — պատասխանեց Գաբո բիձեն ու փող չտվեց:

Աշխենը դպրոց յեկավ, նստած լալիս էր:

— Ի՞նչ ես տվում, — հարցրեց Վարսիկը:

— Ապիս փող չի տալիս:

Հայտնեցին ուսուցչին: Լավ էր, ուսուցիչը մի հին այբբենարան ուներ, Աշխենին տվեց:

Աշխենը տուն յեկավ, մի լավ նայեց, դարակը դրեց:

II

Իրիկունը գյուղացիք հավաքվել էին Գաբո բիձու տունը: Բոլորն ել ծխում էին: Գաբո բիձեն տեսավ Աշխենի գիրքը:

— Ի՞նչ լավ պապիրոսի թուղթ կլինի:

Ու թղթերը մեկ-մեկ պոկեցին, ծխեցին:

Առավոտն Աշխենը նայեց, տեսավ՝ ի՞նչ գիրք,

Ի՞նչ բան, կարծես մկները կերել են: Մի լաց դրեց վոր, մի լաց:

Դպրոցում ել Աշխենը լալիս եր:

— Ինչո՞ւ յես լաց լինում, — հարցրեց ուսուցիչը:

— Ա... պին, ա... պին գիրքս պապիրոս արել ու քաշել...

— Ա՛խ եղ Գաբո բիձեն, Աշխենի մորն ել թակում ա, — ասացին աշակերտները:

Ուսուցիչն ու յերեխեքը վորոշեցին՝ Աշխենը հերթով գնա ընկերների մոտ, դասը սովորի ու յետ չմնա:

23. Մարդ կսովորի, միայն թե յեռանդ ունենա.

Մի գյուղում յերկու վորը մանուկ կային, մեկը՝ իննը, մյուսը՝ տաս տարեկան: Յերկուսն ել ուզում էին կարդալ-գրել սովորել. բայց հոր մահից հետո միայն մի քուրք եր մնացել. ձմեռն ել շատ ցուրտ եր, ի՞նչ անեյին, յերկուսը միասին դպրոց գնալ չէյին կարող:

— Գիտե՞ս ինչ, Մուկուկ, — ասաց մեծը:

— Ի՞նչ, — հարցրեց Մուկուկը:

— Արի՛ եսպես անենք. մի որ քուրքը յես հագնեմ, դպրոց գնամ, մյուս ուրը՝ դու: Ի՞նչ վոր յես սովորեմ, քեզ կպատմեմ, ինչ վոր դու սովորես, ինձ պատմի:

Այդպես ել արին:

Մի անգամ ուսուցիչը հարցրեց Պարույրին.

— Յեղբայրդ ո՞ւր ե, ինչո՞ւ դասի չի յեկել:

— Քուրք հագնելու հերթը իմն ե, — պատասխանեց Պարույրը:

24. Կենդանի անկյուն.

Մեր դպրոցն այս տարի տեղափոխվեց նոր շենք. Մի սենյակ հատկացրին մեզ կենդանի անկյան համար. այդտեղ պատահաններում արկղների ու ծաղկամանների մեջ բույսեր կան, ծաղիկներ, փոքրիկ վարդի թուփ:

Մեծ յերկար արկղում մենք զանազան սերմեր ենք ցանել. վանդակներում փոքրիկ թռչուններ կան:

Մի մեծ վանդակում ել նապաստակ կար: Այդ վանդակի մոտ միշտ խմբված էյին լինում աշակերտները:

Նապաստակը վախկոտ-վախկոտ նայում եր, ականջները խլշտացնում:

— Առ կեր, ես քեզ կաղամբ, ես ել գազար, ի՞նչ ես վախենում, — ասում էյին աշակերտները:

Բայց նապաստակը յերկար ականջները ցցած միշտ դողում եր:

Կենդանի անկյան հերթապահը բույսերը պետք է ջրի, վանդակները մաքրի, կենդանիներին կերակրի:

— Կենդանի անկյուն ունե՞ք դուք:

— Թե չունեք, կազմեցե՞ք:

— Դիտեցե՞ք բույսերը և կենդանիները ու գրի առե՞ք:

— Նկարեցե՞ք ձեր կենդանի անկյունը:

— Կավից նապաստակ, մուկ պատրաստեցե՞ք:

— Գունավոր թղթից նապաստակ, մուկ կտրեցե՞ք:

25. Կարմիր քանակի տարեդարձը.

Հսկեց յերաժշտության ձայնը:

Գալիս են, գալիս:

Կարմիր բանակայիններն են գալիս:
 Այսօր Կարմիր բանակի տարեդարձն է:
 Բոլորը դեպի լուսամուտներն են վազում. վո-
 մանք ել փողոց են դուրս գալիս:
 Ահա Կարմիր հրամանատարը մոխրագույն ձի



նստած. նրա յետևից գնում են յերաժիշտները:
 Ինչքան մեծ թմբուկներ, ինչ պսաղան փողեր:
 Ահա և զրոշակը: Դրոշակի յետևից գնում են զին-

վորները: Ամեն մի շարքում ութ զինվոր ե գնում:
 Հավասար քայլերով են անցնում:

Յերաժիշտությունը լռեց:
 Առաջնորդը նշան տվեց, նրանք սկսեցին յերգել
 իրենց սիրած յերգը.
 „Անվախ կռիվ կերթանք
 բուրժուալի դեմ“...

- Կարմիր բանակ տեսնել եք դուք:
- Ձեր գյուղում Կարմիր բանակից վերադարձած գյուղացի-
 ներ կան:
- Իմացեք նրանցից Կարմիր բանակի մասին:
- Յեթե ձեր գյուղում կամ քաղաքում կարմիր բանակայիններ
 կան, եքսկուրսիա գնացեք նրանց մոտ, ծանոթացեք նրանց կյան-
 քին և աշխատանքին:

26. Որատեստից.


Այս գիշեր ձյուն յեկավ:
 Շատ, շատ, փափուկ, մաքուր:
 Յերկրորդ դասից հետո մենք գնացինք բակը:
 Չնազնդի տվինք:
 Արաքսին, Մարոն ու Արամը ձնե մարդ շինե-
 ցին, մենք սկսեցինք ոգնել նրանց. մեծ ձնակույտը
 գլորելով մոտեցնում էյինք ձնե մարդուն:
 — Տեսեք, տեսեք, — ձայն տվեց Ազատը, ձյունի
 տակ հրես կանաչ խոտ կա:
 — Ինչո՞ւ չի սառել, — հարցրինք մեր ուսուցչին:
 — Վորովհետև ձնով ծածկված ե յեղել:
 — Դե շուտ-շուտ ծածկենք, թե չե՛ կմրսի, կսառ-
 չի, — առաց Ազատը:
 Խոտը ծածկեցինք ու ելի մեր խաղը շարունա-

կեցինք: Ձյունի վրա Ազատը ազուավի ճանկերի
հետքեր գտավ. այդ հետքերով ուսուցչի ոգնությամբ
մենք իմացանք, թե ազուավը վոր կողմն է գնացել:

— Ձմեռը ձյունը ինչ նշանակութիւն ունի բույսերի համար:

27. Ուրախ անուր.

Մենք ուրախացանք, վոր ձյունն է յեկել: Սահ-
նակներ շինեցինք, վազեցինք՝ սարից գետափ սղը-
ղալու: Սարից մինչև գետը մեկ եյինք սղղում:



Սահնակ դեռ չեյինք կարողանում քշել:

Պատվում եյինք ու ամեն թմբից հետո գլխին-
ծի տալիս: Թրմփում եյինք իրար գլխի, վեր թըռ-
չում, ուրախ-ուրախ ծիծաղում:

— Ձմեռն ինչ էք խաղում:

28. Յէրբ ե յինում.

Ձյուն կա դաշտերին,

սառույց գետերին.

բուքն է հեծեծում,

դռները ծեծում:

Այս յէրբ ե լինում.

29. Չմեռ.

Չմեռ ե: Սար ու ձոր սպիտակ են հագել:

— Ղան, ղան, ղան.— մի բարձր տեղ կանգնել ու կռա-
վում է ազուավը:

Ամենքը ձայները կտրել են, մտել իրենց տունն
ու բունը: Միայն յերեսաներն են, վոր ամբողջ որը
հաց ու ջուր մոռացել, ձնագնդի յեն խաղում և
իրիկունը ձեռներին փչելով վերադառնում տուն:

— Նկարեցեք ձմռան տեսարաններ:

30. Չյունը.

Մենք վերցրինք ձյունով լիքը բաժակը և դասա-
րան բերինք: Ձյունը սկսեց դանդաղ հալչել. յերբ
բոլորովին հալվեր եր, մենք տեսանք, վոր բաժակը լի-
քը չեր, և ձյունից գոյացած ջուրը պղտոր եր:

Ջուրը բաժակով մի քանի որ մնաց դասարանում,
և մենք տեսնում եյինք՝ ինչպես նա ամեն որ պա-
կասում եր: Ուսուցչիչը մեզ ասաց, վոր գոլորշիանում
է և ցնդում ողի մեջ:

31. Զմուռն եքսկուրսիային.

Զյունը ծածկել եր սար ու դաշտ:

— Յերեխեք, յեկեք եքսկուրսիա գնանք,—ասաց ուսուցիչը:

— Ախր ցոլրտ ե,—ձայն տվեց մեկը:

— Ամեն ինչ ձյունը ծածկել ե, ի՞նչ պիտի տեսնենք:

— Մենք ել կերթանք հենց այդ ձյունը տեսնելու,—պատասխանեց ուսուցիչը: Յերբ տուն դառնանք, ամեն մեկդ թող պատմի, զրի ու նկարի այն, ինչ տեսել ե եքսկուրսիայի ժամանակ:

Բոլորս համաձայնեցինք, և ուսուցիչն ասաց, թե ինչ պիտի անենք և դիտենք եքսկուրսիայի ժամանակ.—

1. Վո՞ր ձյունն ե ավելի սպիտակ. է՞ն, վոր նոր ե յեկել, թե է՞ն, վոր վաղուց ե յեկել: Ի՞նչո՞ւ:

2. Ի՞նչ գույն ե ստանում ձյունը հալչելու ժամանակ:

3. Բաժակը ձյունով լցրեք, լավ սեղմեցեք, դպրոց բերեք ու տեսեք՝ վո՞րքան ջուր կստացվի ձյունից, շատ թե քիչ: Վորոշեցեք՝ վո՞րն ե ավելի ծանր,—մի բաժակ ջուրը թե ձյունը:

4. Չափեցեք ձյունի խորությունը պարտեզի զանազան մասերում ու գրեցեք:

Պատասխանեցեք՝ ինչո՞ւ ձյունը գետնի վրա հավասար չի նստած:—

Մենք յերեք խմբակների բաժանվեցինք ու գնացինք: Զյուն չափողները վերջացրին աշխատանքը և սկսեցին ձնագնդի խաղով:

Դպրոց վերադառնալով՝ մենք ձյունի բյուրեղներ

նկարեցինք ու զրի առանք այն բոլորը, ինչ տեսել էյինք եքսկուրսիայի ժամանակ:

32. Յեղեվնին

Աշուն ե. Բոլոր
ծառերը տկուր՝
տխուր անտառում
դողում են, մրսում:

Յեղենին միայն,
կանաչով գուգված,
ամուր կանգնել ե
ցուրտ բամուլ դիմաց:

— Ել վո՞ր ծառերն են՞ ձեռը կանաչ լինում:

33. Ծիտիկների սեղանը.

I

Յուրտ ձմեռ եր: Զյունը ծածկել եր գետինը:

Ճնճողուկները քաղցած անհանգիստ թռչկոտում էյին: Մանկատան յերեխաները տաք սենյակի պատուհանից նայում էյին դուրս:

Սուրիկն ասաց.

— Յեկեք քիչ հաց տանք՝ ուտեն:

— Չէ, յեկեք այնպես անենք, վոր նրանք ձմեռը բոլորովին սոված չմնան,—ասաց Շողիկը:

— Ի՞նչպես,—հարցրին յերեխաները:

— Այ, յեկեք նրանց համար սեղան պատրաստենք:

Բոլորը համաձայնեցին:

Վերցրին մի լայն տախտակ, ծայրերին պարան-
ամրացրին և բակի ծառից կախեցին:

Այդ տախտակի վրա հացի փշրանքներ շաղ տվին:
Ճնճողունները վրա թափվեցին, կերան:

Դրանից հետո յերեխաները ամեն առավոտ թըռ-
չունների համար սեղան եյին պատրաստում, իսկ
թռչուններն ուրախ ծվվալով գալիս ուտում եյին:

Այսպիսով նրանցից շատերը մահից ազատվեցին:

— Դուք ել թռչունների համար սեղան պատրաստեցեք:

— Կերակրեցեք նրանց. թռչունները մեր բարեկամներն են:

34. Գայլերի վտանգը.

(Ծեռ վորսուրդի պատմածք)

Մեր գյուղի մոտ գայլեր եյին յերևացել: Են-
քան ել շատ եյին:

Ամեն ուր փորձանք եր պատահում: Մի ուր հորթ
եյին տանում, մի ուր՝ վոչխար, մի ուրիշ ուր՝ այծ,
մեկ-մեկ ել կովերին եյին մոտենում:

Պառավները մի լաց եյին գրել, մի լաց:

— Բա ամոթ չի, թվանքներդ առել եք ու նըս-
տել: Գելերը մեր տունը քանդեցին:

Վհնց եյինք ամաչում:

Մի ուր հավաքվեցինք, վորսի գնացինք: Տասը
հոգի եյին հավաքվել: Քսան հոգի յեւ ուրիշ գյու-
ղերից յեկան:

Եզ ուրը Հակոբի եշը սատկել եր. քաշ տվինք,

տարանք, գեղի ղրաղը մի այգու մեջ դրինք, թագ
կացանք:

Նոր եր սկսել մթնել: Սաստիկ ցուրտ եր. մառա-
խուղը գետինը կոխել եր: Մին ել հանկարծ գելի
վոռնոց լսվեց, հետո մի ուրիշինը ու մեկ-մեկու յե-
տևից գելերը յեկան, եշի դիակին վրա պըծան:

— Տղերք, ժամանակն ե, — հրացաններդ պատ-
րաստեցեք, — ձայն տվի յես:

Գազանների աչքերը մթան մեջ փայլ եյին տա-
լիս:

Հրացանները մեկ-մեկու յետևից լցնում եյինք
ու կրակում:

Առավոտը 14 գելի լեշ հավաքեցինք, սելը դար-
սեցինք ու յեկանք գյուղը:

Պառավներն ել յերեսով չեյին տալիս:

35. Իմ սղդակը.

(Կարդալու յե ուսուցիչը)

Մեզ մոտ մալախաններ են ապրում: Չմեռը
նրանց յերեխաները տաք հագնվում են ու սարիցը
սահնակներով սղդում:

Յես ել սահնակ ունեյի, բայց իմը շատ կոպիտ
եր ու ծանր, հազիվ-հազ սղդում եր:

Նստում եյի վրեն ու վոտներս գետնին խփելով
մի կերպ ներքե գնում: Իսկ են մալախանների տղեքը
գալիս եյին ու գյուղի նման կողքովս անցնում:

Կոլյա անուշով մալականի մի տղա կար. նրա սահնակը բոլորից լավն էր:

— Կոլյա, — ասացի եղ տղին, — մի ցույց տուր քո սահնակը՝ տեսնեմ եղ ի՞նչպես ե շինած, վոր եղպես թեթև ե ու լավ սղղում ե:

Յույց տվեց, տեսա. բարակ պինդ տախտակից եր շինած, տակիցն ել յերկաթ եր խփած:

— Ես յերկաթը վորտեղից, — հարցրի յես:

— Ակի հին յերկաթ եր, ախպերս կտրեց շինեց. կարելի յե արկղի կողքերի ժեշտից ել խփել, են ել լավ ե. կոռպերատիվում շատ կա:

Տուն յեկա, յեղբորս հետ սկսեցինք շինել. մուլթն եր, վոր պրծանք:

Ել չհամբերեցի, դուրս յեկա սարը, նստեցի. մի գնաց, մի գնաց վոր. ի՞նչ Կոլյա, ի՞նչ Իվան, հազարը գային՝ յետևիցս չեյին հասնի:

— Դուք սահնակ ունե՞ք:

— Սահնակ չինեցե՞ք:


— Սահելու համար սար պատրաստեցե՞ք:

36. Յրտառար ականջները.

Այսոր մեծ դասամիջոցին մենք ձյան հյուս եյինք գլորում: Շատ եյինք ուրախանում, վոր արագ մեծանում եր: Ենքան մեծացավ, վոր գլորել չեյինք կարողանում:

Պողոսն ինձ ձայն տվեց.

— Արտուշ, Արտուշ, ականջներդ բոլորովին սպիտակել են, ցրտատար են յեղեք: Շուտ ձյունով շփի՛ր:



Յես չլսեցի նրան. կարծում եյի ցուրտ կզգամ: Պողոսն ու Աշոտը վազեցին ինձ մոտ և առանց բան ասելու սկսեցին ձյունով ականջներս շփել:

Յերկու ըոպեյից հետո բաց թողին, ասացին.

— Լավ, անցավ: Ճարպ քսելու կարիք ել չկա: Մինչև իրիկուն ականջներս մրմռում եյին:

— Ձեր ականջները ցուրտը տարել ե:

— Ի՞նչ եք արել այդ դեպքում:

— Յուրտը տարած ականջները, ձեռքերը կարելի յե կրակին մոտեցնել:

— Ինչո՞ւ չի կարելի, հարցրեք բժշկին:

37. Հնարք.

— Քնիր, բալիկս, քնիր,—ասում է մայրը յերեխային,—հանգիստ քնիր:

Պառկեցնում է, վոտքերը ծածկում ու գնում: Լսում է յերեխայի լացը: Շփոթված յետ է գալիս:

— Ինչո՞ւ յես լալիս, բալիկս, ինչո՞ւ:

— Դիտվամբ եմ լալիս: Վոր գիշերը յերբ վերմակս ընկնի, լաց չլինեմ:

38. Մրսելու դեմ.

Հենց վոր աշնան անձրևներն սկսվում էին, մեր դասարանում հազ ու փռչտոց եր ընկնում. հարբուխն սկսվում եր: Կարմրաթուշ Արմիկն եր միայն, վոր ծիծաղում եր մեզ վրա. հարբուխը կամ հագելը չգիտեր՝ ինչ բան է: Շատ խնդրեցինք, պատճառը մեզ ասաց. «Յես պիտներ եմ, մեր հրահանգիչը մեզ միքանի պատվեր է տվել. յես կատարում եմ և չեմ հիվանդանում: Ահա այդ պատվերները.

1. Վոտներդ չթրջեք. իսկ յեթե թրջվեց, շուտ չորացրեք:

2. Քրտնած դուրս չգաք փողոց: Զգուշացե՛ք միջանցուկ քամուց:

3. Ամենազլխավորը՝ առավոտ ու յերեկո մինչև մեջքներդ սառ ջրով լվացեք: Յերեկոյան շատ ախորժելի յե պառկելը, յերբ պաղ ջրից մարմինդ վառվում է: Առավոտը յերբ լվացվում ու շփվում ես

սառ ջրով, քունդ իսկույն փախչում է, աշխուժ ու զվարթ ես դառնում:

— Հետևեցե՛ք այս պատվերներին:

39. Ի՞նչ է անում մեր սանիտարը.

Ամեն շաբաթ դասկոմը նշանակում է մի նոր սանիտար, վորը հսկում է մաքրությանը: Հետևում է, վոր դասամիջոցներին լուսամուտը կամ ոգանցքները բաց անեն, դասարանի փողին և գրատախտակը թաց ջնջոցով մաքրեն. նա մեզ հիշեցնում է, վոր դասարան մտնելիս վոտքներս մաքրենք և դպրոցում մաքրություն պահպանենք:

Յերբ մեկը ձեռքն է կտրում կամ մի տեղը վնասում, սանիտարը ոգնություն է ցույց տալիս, կապում կամ յող է քսում:

Մեր սանյեռյակը պատերին պլակատներ է կախարել. նրանց վրա առողջապահական կանոններ են գրված. նախասենյակում պլակատի վրա գրված է՝

Վոտներդ մաքրի՛ր:

— Սանիտար ունե՞ք դուք:

— Ի՞նչ է անում նա:

— Դպրոցում մաքրություն պահպանում եք դուք:

40. Բժշկի գրույցներից.

I դրույց.

Բժիշկը մեզ քննեց. շատերի մարմինը կեղտոտ եր: Բժիշկը մի կլոր ապակի յեր բերել—խոշորացույց. այդ խոշորացույցը դրեց մեր ձեռքերի վրա ու հարցրեց.

— Խնչ եք տեսնում:

— Շատ ծակոտիներ, — պատասխանեցինք մենք:

— Այդ ծակոտիներից քրտինք ե դուրս գալիս, — ասաց բժիշկը. — քրտնքի հետ մեր մարմնից փասակար կեղտոտ նյութեր են դուրս գալիս: Յեթե այդ ծակոտիները կեղտոտ լինեն, փասակար նյութերը կմնան մարմնի մեջ ու կթունավորեն. մարդ գունատվում ե, սակավարյուն դառնում:

Բժշկի այս զրույցից հետո մենք իմացանք, թե ինչո՞ւ պետք ե մարմինը մաքուր պահենք.

II զրույց.

— Յերեխեք, յես տեսնում եմ, վոր դուք չեք սիրում ուտելուց առաջ ձեռքներդ լվալ, — ասաց բժիշկը. — պետք ե լվացվել. ձեռքերով մենք հաց ենք վերցրնում դնում բերանը. յեթե ձեռքերը կեղտոտ են, փասակար միկրոօրգանիզմները մեր բերանն են մտնում ու ամեն տեսակի հիվանդություններ առաջացնում:

— Դուք հետևում եք ձեր դասարանի աշակերտների մաքրությանը:


— Ուտելուց առաջ լվացվում եք:

41. Մեր ճաշը.

Հասավ ճաշի ժամանակը:

Մայրիկս կավե ահագին ամանը լցրեց թանապուրով ու մեջտեղ դրեց: Բոլորս շարվեցինք ամանի շուրջը, գդալները վերցրինք ու սկսեցինք ուտել: Արտաշը գդալը ձեռքին՝ մտիկ եր տալիս ուտող-

ներին, ամանն ու գդալները զննելով: Նա տեսնում եր, թե ինչպես պապիկի ու հայրիկի բեխերը թըրջվում եյին ապուրով. ապուրը կաթկըթում եր գդալների մեջ, գդալները նորից ամանն եյին տանում: Գդալներն ել լավ չեյին մաքրել. յերեկվա ապուրը



չորացել եր վրաները: Արտաշի ախորժակը փակվում եր, չեր ուզում ճաշել. նրան միշտ հայհոյում եյին ու վզակոթին տալիս. անունն ել «կոտրատվող» եյին դրել:

— Լավ եր անում Արտաշը, վոր ընդհանուր ամանից չեր ուտում:

— Առողջապահական ե ընդհանուր ամանը:

— Առանձին ամաններում ուտելն ինչով ե լավ:

— Ձեր տանն ինչպես են ուտում:

- Ձեր ամաններն ու գդալները մաքուր են լինում:
- Ինչո՞ւ պետք է մաքուր լինեն:
- Կեղտից ամեն տեսակի հիվանդութիւններ են առաջ գալիս. մաքրութիւնն պահեցէք:

42. Ընտանիքը.

Ձարիկին մի անգամ հարցրին. «ձեր տանեցիք ովքե՞ր են»:

Նա յեւ պատասխանեց՝ մեկ-մեկ մատը ծալելով. «Հայրիկս, մայրիկս, տատիկս, յերկու յեղբայրս՝ Կարենն ու Գուրգենը, մեր փսոն. հա՛, քիչ մնաց՝ մոռանայի, մեկ եւ մեր Բողարը: Ես եւ յէս», — վերջացրեց Ձարիկը՝ մի մատ եւ ծալելով:

- Ձարիկի պատասխանը ճիշտ է:
- Ձեր ընտանիքի անդամները ավելի՞ յեն, թվեցեք:

43. Իմն է.

Վարդանի ու Սուրիկի ծնողները մահացան. յերե-
խաները տեղ չունեյին ապրելու. նրանց մանկատուն
տարան: Մանկատան ակումբում մի մեծ փայտե
ձի կար: Սուրիկն ու Վարդանը վրա ընկան ձիուն:

— Իմն է, իմն է ձին, — ասում էր Սուրիկը:

— Ձե՛, իմն է, — խլում էր Վարդանը:

Իսկ մյուս յերեխաները կանգնել էյին ու
ծիծաղում սրանց վրա:

— Ե՛յ, խելացիներ, ձին վոչ մեկինդ է, վոչ եւ

մյուսինը. ձին բոլորինս է: Մենք իմն ու քոնը
չունենք. մեզ մոտ ամեն ինչ բոլորինս է:

- Եքսկուրսիա կատարեցէք մոտակա մանկատունը, ծանոթա-
ցեք սաների կյանքին:

44. Մեր կոոպերատիվը.

Մեր կոոպերատիվի ամբողջ ապրանքները տեղա-
վորված են մի փոքրիկ արկղում:

Մի մասում գրքերն ու տետրերն են, մյուս
մասում՝ թանաքաման, գրիչ, մատիտ: Առավոտը
այդ արկղը դնում ենք նախասենյակը ու աշակերտ-
ներին գրենական պիտույքներ ծախում:

Դասերից հետո արկղը դնում ենք ուսուցչի սե-
նյակը:

Ապրանքները մեզ գյուղի կոոպերատիվն է տա-
լիս եժան գներով. մենք ծախում ենք քիչ ոգուտով:
Ստացած ոգուտով անդամագրում ենք մեր չքավոր
ընկերներին, նրանց տետրեր և ուրիշ պիտույքներ
տալիս:

Մենք եքսկուրսիա գնացինք հարևան գյուղը՝
յոթնամյակի կոոպերատիվը տեսնելու:

Այ, այնտեղ գործը շատ կանոնավոր էր: Կոոպե-
րատիվին մի ամբողջ սենյակ են տվել: Պահարան-
ներ կան. կանոնավոր հաշիվ են պահում:

Վերադառնալիս ճանապարհին խոսում ելինք,
թե ինչպես անենք, վոր մեր կոոպերատիվն ել
մեծացնենք ու կարգի բերենք:

— Կոոպերատիվ ունեք դպրոցում:

— Կապ հաստատեցեք մյուս դպրոցների կոոպերատիվների

հետ:

45. Խեղոք հաշիվ.

Մի տղա կանգնել եր փռան առջև ու ախորժա-
կով նայում եր տաք-տաք բլիթներին:

Ներս ե մտնում ու հարցնում.

— Ի՞նչ արժե բլիթը:

— Վեցը հինգ կոպեկ:


— Վեցը՝ հինգ կոպեկ, հա. ուրեմն հինգը՝ չորս
կոպեկ, չորսն ել՝ յերեք կոպեկ, յերեքը՝ յերկու,
յերկուսը՝ մեկ, իսկ մեկը՝ անփող: Մեկը ինձ հերիք
ե, տվեք ինձ մեկը:

46. Գյուղի առուտուրը.

(Կարդալու յե ուսուցիչը)

Կեդտոտ, աղքատ գյուղ եր մեր գյուղը: Այդ գյու-
ղում միայն մի լավ քարաշեն, յերկու հարկանի
տուն կար, դուքանչի Հաթամի տունն եր այդ: Վերե-
վի հարկում ինքն եր ապրում, իսկ ներքևում իր
խանութն եր:

Ինքը Հաթամը գնում եր Թիֆլիս, Յերևան ապ-
րանք բերում, իսկ կինը՝ Յեղիսաբեթը դախլի յետևը
նստած առուտուր եր անում:



Ել հոտած ապրանք, ել փտած չիթ չկար, վոր
չծախեյին գյուղացիների վրա: Կշռելիս քաշումն
եյին գողանում, չափելիս—արշնումը: Հոտած, վորդ-
նած պանիր եյին ծախում, գյուղացիներին պլոկում,
թալանում: Իրանք լավ ուտում, խմում, լավ հագնում
եյին: Հաթամի յերկու տղեն ել Թիֆլիսում եյին
սովորում:

Հեղափոխությունը յեկավ:

Մեր գյուղի կյանքը փոխվեց:

Գյուղացիք փայտ ստացան, շենքերը նորոգեցին,
իրանք կարգի բնկան, դուքանչի Հաթամի տան կող-
քին կոոպերատիվ շինեցին: Հայկոոպից վարկ ստացան,
փայավճարները հավաքեցին: Կոոպերատիվը ապրան-
քով լցրին—եւ ալյուր, եւ աղ, մեխ, նավթ, չիթ:

Գործը լավ գնաց. գյուղացիք Հաթամի խանութը ել վոտ չդրին:

— Եսան կոոպերատիվը շինեցինք, հիմա յեւ դպրոցի շէնքը կսկսենք, հետո յեւ ելեկտրոկայանը,—ասում եյին գյուղացիք:

Խանութպան Հաթամի գործերը թարավեցին, տունը առանց վերանորոգման քոսոտեց. իրա ձայնը փորն ընկավ. իսկ չաղ Յեղիսաբեթը լղարեց, չոփ դարձավ: Եւ են առուտուրը չկար, եւ համով կերակուրները չկային:

— Ձեր գյուղում կոոպերատիվ կա:

1. Համեմատեցեք կոոպերատիվն ու մասնավոր խանութը.
2. Եքսկուրսիա գնացեք դեպի կոոպերատիվ:
3. Ինչ ապրանքներ են ծախում կոոպերատիվում:
4. Դրեցեք ապրանքների անունները:

47. Եարժվող տունը.

Յերբ պապս առաջին անգամ վերադարձավ կայարանից, զարմացած պատմում եր գնացքի մասին:


— Ամենից առաջ՝ նա իր գնալու ժամանակն ունի. քեզ յերկու անգամ զանգով կանչում ե. ու շացար—ուրեմն կմնաս:

Ուզածդ ժամանակ չես կարող ցած իջնել. դու պետք ե իրեն հարմարվես. կանգնեց՝ կիջնես. չե՛ հետը կգնաս:

Վոչ ձի յե քաշողը, վոչ յեզ. վոչ ուտել կուզի, վոչ հանգստանալ. հարկավոր ե միայն վառել և առատ ջուր տալ:

Սա խոմ կառք կամ սայլ չի, այլ մի շարժական տուն ե. վազում են իրար յետևից սենյակները, մեկը մյուսին քաշում, միասին շարժվում, միասին կանգ առնում. վայ թե մեկը հերթից դուրս յեկավ.— կմնա:

Ես քաղաքում աչքդ խփում ես, բաց ես անում— մի ուրիշ քաղաքումն ես:



Առաջ յեթե յերեք որում եյիր գնում, հիմա կես որն ել բավական ե. Միայն չհասկացա, թե ինչո՞ւ մեկ-մեկ ձենը գլուխն ե գցում ու գոռում, սուլում, սար ու ձոր թնդացնում:

— Գնացք տեսել եք դուք:

— Պատմեցեք ձեր տպավորությունները:

— Ինչո՞վ ավելի արագ կարելի յե գնալ—գնացքո՞վ, թե վոտքով, ձիով:

— Գնացքը նկարեցե՞ք:

— Եքսկուրսիա գնացեք մոտիկ կայարանը:

48. Ելեկտրականություն.

I.

Մեր տանն ել ելեկտրական թելեր անցկացրին, տանձի նման մի շուշա կախ տվին:

— Այ, կտեսնե՞ք, թե ի՞նչ լույս կլինի,—ասաց թելերն անցկացնող յերիտասարդը:

— Բանի՞դ կաց, խելքի տոպրակ,—ասաց մեր պապին.—ո՞վ ա տեսել, վոր շուշե տանձը լույս տա: Գնա՛ քո պապին եդ բանը հավատացրո՛ւ:

Յես ել չեյի հավատում: Վո՞նց թե՛ վո՞չ նավթ ե պետք, վո՞չ ել լուցկի:

Մթնեց: Հայրիկս պատին մոտեցավ, մի բան վրորեց, մեկ ել ի՞նչ տեսնենք՝ տունը լուսավորվեց, են ել վո՞նց. ո՞վ եր տեսել ենպես պայծառ լույս:

— Տեսա՞ք. ա՛յ թե ի՞նչ են հնարել գիտնականները: Համ լավ լույս ե տալի, համ ել մուր չունի:

II

Մենակ եյի, համբերությունս հատել եր: Բա չի՛ մանամ, թե եդ շուշի միջի մազը վառվում ե, թե չե:

Շուշի վերև մի սև բան կար. բռնեցի, պտտացրի. մեկ ել տեսնեմ՝ տունը մթնեց. ա՛ջ պտտացրի, նորից լուսավորվեց:

Այ քեզ հրաշք:

Շուշե տանձը բռնեցի, վրորեցի, դուրս ընկավ. տեսնեմ՝ տունը մթնեց, մատս տարա շուշի տեղը թե չե, կարծես մեկը բռնեց ու պինդ քաշեց: Լեղիս շուր կտրեց:

— Ո՞վ ե քաշում,—բարձր բղավեցի:

Մեկ ել ներս տարա, ելի քաշեցին. ես անգամ ավելի բարձր բղավեցի: Հայրիկս յեկավ:

— Ի՞նչ ես գոռում:

— Մեկը ձեռիցս քաշեց—լաց յեղա յես:

— Շուշեն հանել ես, բայց ելեկտրականությունը չես փակել: Առաջ պիտի փակեյիր, հետո հանեյիր: Մեկ ել այդպիսի բան չանես: Փորձանք կպատահի, հա՛. ելեկտրականությունը հանաք բան չի, մա՛րդ կսպանի,—ասաց հայրս ու շուշեն նորից տեղը գրեց:

— Ձեր գյուղում ելեկտրականություն կա:

— Իմացե՛ք ուսուցչից՝ ելեկտրականություն ի՞նչ ոգուտ ե տալիս:

49. Դերասանները.

I.

Դպրոցի բարձր խմբի աշակերտները ներկայացում տվին. մեծ աշակերտներից մեկը բանվորի շորեր եր հագել, մյուսը՝ գինվորի, յերրորդը՝ պառավ կնոջ, մի ուրիշն ել՝ վորսորդի: Աշակերտները լսում եյին ու շարունակ ծիծաղում:

Ներկայացումից հետո Ծատուրն ու Պետրոսը տուն յեկան:

— Պետրո՛ս, արի մենք ել տանը ներկայացում տանք:

— Ի՞նչպես,—հարցրեց Պետրոսը:

— Այ թե ի՞նչպես. բեմի տեղ թախտերը դնենք, վարագույրի տեղ՝ մեր մեծ փալասը կախենք. յես

բանվոր խաղամ, դու՛ զինվոր, Թագուշը՝ պառավ,
Սիրաքը՝ վորսորդ:


— Շատ լավ,—ասաց Պետրոսը.—իսկ ո՞վ պիտի
մեզ մտիկ տա:

— Պահ քու տունը շինվի, քու չից ենքան խու-
ժան-մուժան բերենք վոր, բերանաբաց մտիկ տան:

II.

Ասին ու արին:

Փալասը կախ տվին տան անկյունը, թախտերը
յետևը շարեցին: Բրդից բեխ ու միրուք պատրաս-
տեցին, բեմ դուրս յեկան:



Յերբ վարագույրը բացվեց, մտիկ տվողները
չկարողացան ծիծաղները պահել:

Ծատուրը հագել եր հոր քուրքը, փափախը գլու-
խը քաշել՝ մինչև աչքերը: Պետրոսը հագել եր զին-
վորի պես: Թագուշը պառավ նանի արխալուղն եր
հագել, աղլուխը կապել, գոգնոցն ել առջևից, մի
կարճիկ փայտ ել ձեռը բռնել: Հանկարծ ներս մտավ
Սիրաքը՝ հրացանի տեղ մահակը ուսին դրած. յե-

տևից ել վոր կեռ պոչ շունը չմտա՞վ, բոլորը փրոթ-
կացրին: Շունը կանգնեց թախտերի պոնկին ու
սկսեց հատ-հատ հաջել՝ նայելով խուժաններին:

Մտիկ տվողների մեջ հռհռոց ընկավ:

— Ո՛ւ-ու, դերասաններ, դերասաններ,—ձայն
եյին տալիս մտիկ անողները:

— Ձեր դպրոցում ներկայացում կազմակերպեցե՞ք, հրավիրե-
ցե՞ք գյուղացիներին:

50. Ո՞վ ե Լեւինը.

Առաջ մեզնում խորհրդային իշխանություն
չկար: Բոլորին թագավորն եր կառավարում: Գենե-
րալներն ու հարուստներն ոգնում եյին թագավորին:

Բանվորները շատ վատ եյին ապրում. առավո-
տը շուտ գործարաններն եյին գնում ու այնտեղ 12
ժամ աշխատում, իրիկունը շատ ուշ տուն եյին
գալիս՝ հոգնած, քաղցած:

Հարուստները լավ զարդարված տներում եյին
ապրում, փոչինչ չեյին անում ու շատ փող եյին
ծախսում: Իսկ բանվորներին աշխատանքի համար
շատ քիչ փող եյին վճարում, հազիվ ցամաք հացի
յեր ոգտում:

Ծանր եր բանվորների դրությունը:

«Ինչո՞ւ բան չանողը լավ ե ապրում, իսկ աշ-
խատողը քաղցած մնում»,—հարցնում եյին նրանք:

Յեւ բանվորներն սկսեցին կռվել այն բանի հա-
մար, վոր բոլորն աշխատեն, վոր գործարանները
պատկանեն վոչ թե հարուստներին, այլ աշխատող
մարդկանց:

Եղ մարդիկ, վոր կուվում էյին աշխատավորների համար, հեղափոխականներ էյին կոչվում, իսկ հեղափոխականների առաջնորդը Լենինն էր:

Նա ասում էր. բանվորները պիտի ընտրեն իրենց խորհուրդները. բոլորին խորհուրդները պիտի կառավարեն: Թագավորին ու հարուստներին պետք է վճռել: Այս բանը դուր չէր գալիս հարուստներին ու թագավորներին: Այդ խոսքերի համար նրանք Լենինին ու նրա ընկերներին բանտերը նստեցրին:

Իսկ բանվորները լսեցին Լենինին ու մյուս բայլեիկներին: Նրանք բոլորը միացան, խորհրդային իշխանություն կազմեցին: Իշխանության առաջնորդ ընտրեցին Լենինին:

* * *

Բանվորներին ու գյուղացիներին ազատություն տալու համար Լենինն աշխատում էր դեռ թագավորի ժամանակ:

Նա ասում էր բանվորներին ու գյուղացիներին. «Դուք վոչ թե հաց պետք է խնդրեք թագավորից, դուք պետք է զենք վերցրած դուրս գաք թագավորի դեմ»:

Բանվորները հասկացան, վոր պետք է միանան և գյուղացիների հետ կուվեն թագավորի դեմ:

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ նրանք վճռեցին հարուստներին և հողատերերին ու բանվորների ու գյուղացիների իշխանություն հիմնեցին, վորը խորհրդային իշխանություն է կոչվում:

51. Պետյայի գրոսանքը.

Իմ հայրը շոֆֆեր էր: Նա Լենինին էր մանածում ավտոմոբիլով:

Մի անգամ յես կանգնած էյի մեր տան մոտ ու նայում էյի ավտոմոբիլին: Հայրս ավտոմոբիլում նստած սպասում էր Լենինին:

Յես կպա հորս, թե ինձ մանածա: Հայրս ասաց.

— Չի կարելի. շուտով Լենինը գալու յես:

Քիչ հետո Լենինը դուրս յեկավ և ուզեց ավտոմոբիլ նստի, ինձ նկատեց, ասաց.

— Ո՞ւմ տղան ես:

— Իմն ե, — ասաց հայրս:

— Անունդ ի՞նչ է:

— Պետյա:

— Դե, նստի, Պետյա, ավտոմոբիլով ման գանք:

— Ե՛, վաղիմիր Իլյիչ, արժե՞ դրա հետ ժամանակ կորցնել, — ասաց հայրս:

Յես կարծում էյի, թե Լենինը կատակ է անում, տեղս կանգնած էյի:

— Դեհ, շոտ, Պետյա, թե չե շտապում եմ. — քոնեց ձեռքս, նստեցրեց ավտոմոբիլը՝ իր կողքին: Ավտոմոբիլը գնաց:

Յերբ մենք հասանք հրապարակին, Լենինը ինձ իջեցրեց ու ասաց.

— Նո՛ւ, Պետյա, վազի՛ր տուն:

Յես վազեցի տուն ու մորս ասացի.

— Լենինի հետ ավտոմոբիլով ման յեկա. հետո ել պատմեցի իմ բոլոր ընկերներին: Վո՞նց էյին նախանձում:

52. Աշակերտի որստետրից.

Հունվարի 21.

Ի՞նչ ե պատահել. ինչո՞ւ այսոր դասարանը լուռ ե:

Աշակերտներ քիչ են յեկել:

Վո՛չ. բոլորն ել յեկել են: Խուժմբ-խուժմբ քաշվել են անկյուլներն ու կամանց քշփշուժ են: Լենինի մասին են խոսում: Վո՛չ վոք չեր հավատում, թե Լենինը մեռել ե:

Ժամը տասին դասարանները գնացին: Բացի Լենինից ուրիշ բանի մասին խոսել չեյին ուզում: Ժամը 12-ին հավաքվեցինք դահլիճ:

Պատմեցին, թե Վլադիմիր Իլյիչը վորքան ե աշխատել, վորքան ե կռվել, պայքարել հարուստների դեմ, թե նա ինչ ե արել բանվորներին ու գյուղացիներին ազատագրելու համար:

53. Մեր պսակը Լենինին.

(Մոսկվայի մանկատան սանի պատմածը).

Յերբ մենք լսեցինք Լենինի մահը, վորոշեցինք նրա համար պսակ հյուսել:

Յերկար աշխատեցինք և հունվարի քսանվեցին, շաբաթ որը պսակն արդեն պատրաստ եր:


Յերեք տղա, յերեք աղջիկ ընտրեցինք, վոր պսակը տանեն:

Յես ել վեցի մեջն եյի:

Այդ որը շատ ցուրտ եր. տանից դուրս գալն անհնար եր. բայց վորոշեցինք՝ ինչ ել լինի, Լենինի պսակը տանենք:

Արագ-արագ գնում եյինք: Բայց յերբ մոտեցանք շենքին, ուր դրած եր Լենինի դագաղը, կանգնեցինք. շատ-շատ մարդ կար, հերթով եյին թողնում:

Շատ պիտի սպասեյինք մեր հերթին. այնքան ցուրտ եր, վոր մեր քթերն արդեն կարմրել եյին: Սկսեցինք խնդրել, և մեզ առանց հերթի ներս թողին:



Մեր առաջից տանում եյին մի մեծ ու փարթամ պսակ: Ի՞նչ վատ ու խղճուկ եր մեր պսակը: «Յերևի չեն ընդունի»,—մտածում եյինք:

Բայց յերբ հասանք Լենինի դագաղին, հերթապահը մեր պսակը դրեց Լենինի վոտների տակ, իսկ այն մեծ պսակը մյուս սենյակը տարան:

Մենք անցանք Լենինի դագաղի մոտով. նրա

դեմքը շատ գունատ եր, կրծքին կարմիր շքանշան
կար:

Մենք անցանք, իսկ մեր յետևից բանվորները
գալիս եյին ու գալիս:

54. Լենինի թաղոււմը.

(Մոսկվացի մի տղայի պատմածը).

Այսօր թաղեցին Վլադիմիր Իլյիչին:

Յես շատ եյի ուզում թաղման ներկա լինել:

Շատ վաղ արթնացա ու գնացի հրապարակը.
Այն շենքի մոտ, ուր դրած եր Լենինի դագաղը, շատ
մարդ կար: Կողքերը կարմիր դրոշակների սև
կտոր եր քաշած:

Որը ցուրտ եր. յես միքանի անգամ յեկա տուն,
տաքացա ու վերադարձա:

Լենինի դագաղն ուսերին բանվորների շարքերը
շարժվեցին դեպի Կարմիր հրապարակը: Թաղման
մարշն եյին նվագում:

Ժամը 4-ին դագաղը իջեցրին դամբարանը:

Սուլիչները սուլում եյին, թնդանոթները կրա-
կում: Ամբողջ խորհրդային յերկրներում 5 բոպե
դագարեց ամեն մի շարժում:

Խորհրդային յերկրների բանվորներն ու գյուղա-
ցիները թաղում եյին իրենց ամենասիրելի ուսուցչին,
ամենալավ բարեկամին:

55. Հունվարի 9-ը.

Մեզնից տարիներ առաջ թագավոր կար: Նա յեր
յերկիրը կառավարում: Բոլորը նրա ծառաներն եյին:
Բանվորները շատ վատ եյին ապրում՝ սոված, մերկ,
առանց ուսումի: Բայց չեյին հասկանում, վոր թա-
գավորն ե բոլորի պատճառը. այնպես գիտեյին,
թե նա բոլորի հայրն ե: Այդպես սովորեցրել եյին



Նրանց տերտերներն ու տիրացուները: Որեցոր սովը
սաստկանում եր: Ի՞նչ անեյին. պետք եր գնալ թա-
գավորի մոտ, ցավերը պատմել նրան, վոր մի ճար
անի: Բանվորները վերցրին սրբերի ու թագավորի
պատկերները ու խմբով շարժվեցին դեպի թագա-
վորի պալատը:

Բայց ի՞նչպես ընդունեց թագավորը:

Նա ուղարկեց իր զորքն ու հրամայեց կրակել ժողովրդի վրա: Բանվորները զարմացան: Այդ ուրը շատ բանվորներ, կանայք ու յերեխաներ սպանվեցին: Բանվորները նոր հասկացան, վոր թագավորն իրենց թշնամին է և վոչ թե հայրիկը, ու սկսեցին ատել նրան:



ԳԱՐՈՒՆԸ ՄԵԶՆՈՒՄ

56. Վերջին փաթիլները.

Չարաճճի ու կռվարար
փաթիլները պաղ ձյունի
ուրախ խաղում, զարկում իրար,
հրհրում են մին մինի:

Ապա հոգնած իջնում գետին,
գրկրվում են իրար հետ
ու ջուր կտրած, յերգով ու ժգին
առաջ վազում դեպի գետ:

57. Յ ա ն ք ս ը.

Լավ իմացիր ցանքսի ժամանակը, չուշացնես,
ամեն մեկ որը հաշիվ ե:

Այնպիսի յեղանակ ընտրիր, վոր վոչ չորային լինի,
վոչ խոնավ, վոչ ել սաստիկ քամի:

Լավ կանես՝ իրիկունը ցանես, վոր առավոտը հա-
տիկները ցողախառն տափնես:

Սերմն առաջուց պիտի պատրաստես: Ընտիրը
պիտի լինի—մաքուր, խոշոր, լիքը: Լավ ե՝ սոված

մնաս, բայց լավ սերմ ցանես: Լավ սերմի արմատ-
ները խորն են գնում, ցրտից ու յերաշտից այնքան
չեն վախենում:

58. Չնծադիկ.

Սառը ձյունի
սառը գրկում
մի ծաղիկ ե
ծլում, ծաղկում՝
թերը քնքուշ,
թերը սպիտակ,
աչիկները
բաց կապուտակ:
Չյուն ու ծաղիկ...
այ բեզդ զարմանք.
ձյուն ու ծաղիկ
ունեն մի կյանք.
դա ձմեռվան
մի ծաղիկ ե.
ձյունից ծնված
ձնծաղիկ ե:

59. Յե՞րբ ե լինում.

Չյունն ե հալչում,
խոտը կանաչում,
ծաղիկը ծաղկում,
որը յերկարում:
Այս յե՞րբ ե լինում:

60. Մեր պատուհանի պարտեզը.

Գարնան սկզբին մենք վորոշեցինք դասարանում
բույսեր ցանել: Վերցրինք չորս ծաղկաման. առա-
ջուց թրջեցինք լոբու, սիսեռի, ցորենի սերմերն ու
ցանեցինք ծաղկամաններում:

Յերեք ծաղկամանը հերթապահն ամեն որ ջրում
եր, իսկ չորրորդը վոչ:

Յերեքում միքանի որից հետո կանաչ ծիլեր
յերևացին, չորրորդում վոչ մի փոփոխություն չկար:

Մենք հողը փորփրեցինք և տեսանք, վոր սեր-
մերն ինչպես ցանել եյինք, այնպես ել մնում եյին:

Մենք հասկացանք, վոր սերմն առանց ջրի չի
կանաչի:

— Ել ի՞նչ ե հարկավոր բույսերին:

— Դուք ել վորձեր արեք:

Դիտեցեք. ձեր զխողովությունները գրեցեք որատետրում:

61. Դպրոցի պարտեզը.

Պարտեզի գետինը կակղել եր, ձյունը հալել,
վերջացել եր: Թռչուններն արդեն յեկել եյին:

Մի որ գնացինք, վոր տեսնենք՝ ծառերը պտկել
են, թե վոչ: Խնձորենին, կեռասենին ու տանձենին
արդեն պտկել եյին: Հայրիկս նորոգում եր ցան-
կապատը, վոր հավերը պարտեզը չմտնեն.

— Յերեխեք, ցաքատը պետք ե սրել տալ, չոր
ձյուղերը կտրելու ժամանակը մոտ ե, — ասաց
հայրիկս:

Որ չեր լինի, վոր հայրիկս պարտեզ չգնար, մի բան չաներ:

Պարտեզի գլուխցիականքը շատ է, բայց ամառն ինչքան լավ է:

62. Ի՞նչ պետք է դիտել գարնանը.

I Գեսք.

1. Նշանակեցե՞ք՝ յե՞րբ ճեղքվածքներ յերևացին ձեր գետի սառուցի վրա:

2. Ճանապարհների վրա յե՞րբ սկսեցին առվակները խոխոջալ:

II. Թռչուններ.

1. Դիտեցե՞ք՝ ձյունից ազատված տեղեր կան: Թռչուններ կան այնտեղ: Ի՞նչ թռչուններ:

2. Նկարեցե՞ք նրանց ձեր որացույցներում:

3. Դիտեցե՞ք և նշանակեցե՞ք որացույցներում արագիլների, կռուկների, սարյակների, հոպոպների գալու ժամանակը:

III. Բույսերն ու միջատները.

1. Ամենից շուտ ձյունը վճրտեղ հալվեց:

Ի՞նչ տեսաք ձյունի տակ:

2. Դիտեցե՞ք ի՞նչ միջատներ են թռչում ուռենու շուրջը:

3. Նշանակեցե՞ք յե՞րբ դուրս յեկան ուռենու առաջին տերևները:

4. Վորոնեցե՞ք գարնան առաջին ծաղիկներն ու բույսերը և նկարեցե՞ք (ձնծաղիկ, սիրելի, թելուկ, ավելուկ, ծնեբեկ, յեղնջնուկ):

5. Չափեցե՞ք ծառերի վորևե ճյուղը գարնանը, ամառը և աշնանը:

6. Նշանակեցե՞ք յե՞րբ առաջին անգամ տեսաք մեղու, իշամեղու, թիթեռ, մայիսյան բզեզ, բզեզ: Նկարեցե՞ք սրանք:

IV. Պարեզ, բանջարանոց ու դառ.

1. Նշանակեցե՞ք՝ յե՞րբ են ծաղկում խնձորենին, տանձենին, սալորենին, բալենին, կեռասենին, և թե ի՞նչը շուտ յերևաց—ծաղիկը թե տերևը:

2. Դիտեցե՞ք՝ նույն բողբոջներին են դուրս գալիս ծաղիկներն ու տերևները, թե տարբեր բողբոջներից:

3. Գրեցե՞ք՝ յե՞րբ սկսեցին արտերը վարել, յե՞րբ սկսեցին ցանել գարին, կորեկը, բրինձը, բամբակը:

4. Նշանակեցե՞ք յե՞րբ սկսեցին վարել բանջարանոցը:

5. Յե՞րբ տնկեցին կարտոֆիլը, կաղամբը, յե՞րբ ցանեցին կոտեմը, բողկը, ուհանը, պամիդորը, բադը, ջանը, պղպեղը: Վճիռ բույսը յե՞րբ շիթիլ արին:

63. Գարուն.

Ձմեռն անցավ,
յեկավ գարուն,
ձյունը հալվեց,
լցվեց առուն,
արև ծագեց
արևելքից,
ծիլեր բաշեց
գետնի տակից:
Ծառը պտկեց,
տվեց բողբոջ,
աղբյուրն հանեց
անուշ խոխոջ:
Արտ գնաց
ծնած մարին,

տվեց անուշ
կաթը ձագին:
Մուկ ու մողես,
միջատ, գեռուն
արևն ելան,
յեկան գարուն:

64. Գարուն.

(Կարդալու յե ուսուցիչը).

Մ արտից սկսվեց ցրտի ու տաքի կռիվը՝ ձմռան
ու գարնան պայքարը՝ Վերջը գարունը հաղթեց.
ամեն ինչ արթնացավ ձմռան ծանր քնից: Բներից
դուրս յեկան կենդանիները, տաքացան արևի տակ.

Սառած գետինը հալվեց, սևահողը բացվեց, հողի
տակից խոտերը հանեցին իրենց փոքրիկ սուր գլուխ-
ները. բացվեցին ծառերի բողբոջները, միջատներն
արթնացան, մանր բզեզ ու մոծեղները, թիթեռները
զուգված թռվռացին, հեռու յերկրներից վերադար-
ձան թռչունները: Առվակները վազեցին, ջրերը
բռնեցին:

Կյանքն աղմկում էր. ուրախություն էր:

Ծանր ձմեռն անցել էր, ցուրտը կորել. գարնան
տաք որեր ելին:

Մենք ել շատ ելինք ուրախ. ձմռան ծանր շո-
րերը դեն գցեցինք, սկսվեցին գարնան խաղերը.
դպրոցում մեր աշխատանքները փոխվեցին. մեծ
աշակերտներն զբաղվեցին մեր դպրոցի հողամասով:
Մենք ել քարերը մաքրեցինք, մեզ համար մի ան-
կյուն վերցրինք. մարգերը սարքեցինք, աշխատանքը
շատացավ: Ամեն մի խումբիւր գործն էր կատարում,

ամեն մի խումբ աշխատում էր իր անկյունն ավելի
լավ կազմակերպի:

Տան գործն ել էր շատացել. խոտը հատել էր,
անասուններին հանգնեցինք տանում:

Փեթակների առաջ ծաղիկներ ցանեցինք: Մեր
դպրոցը պատրաստվում էր տոնելու ծառատունկի
որը:

Մեր կենդանի անկյունում մենք լողունգներ
կպցրինք.

«Ամեն մի աշակերտ մի ծառ տնկի».

«Պիոներ, յերկու ծառ տնկիր».

«Տնկեցիր—ջրիր, խնամիր».

65. Ձրվեծ.

Քչբչալով սարի լանջից
ցած ե իջնում
ջուրը բարակ.
ցած ե իջնում ձորի միջից,
դուրս ե փախչում
արագ-արագ...

Դուրս ե փախչում ձորի միջից,
առաջ վազում
վոլոր-մոլոր,
են ահավոր ու մոլթ կիրճից
զալիս հասնում
անդունդը խոր...

66. Առվակներ.

Կլկլան առվակները
 պլպլում են,
 պլպլան առվակները
 կլկլում են.
 կլկլում, պլպլում ու գնում են.
 պլպլան առվակները
 փրփրում են,
 փրփրան առվակները
 կլկլում են,
 կլկլում, պլպլում ու գնում են.

67. Զուրը.

Ամեն շուր մեզ պիտանի չի: Զուր կա, վոր մեզ
 ֆաասում է ու հիվանդացնում. հենց վոր մարդ խմում
 է, փորը ցավում է, լուծ է ընկնում, վարակիչ հի-
 վանդություն է ստանում—խուլերա, վորովայնի
 տիֆ:

Յերբ մարդ վատ ջրով է լվացվում, աչքերը
 ցավում են, յերեսի ու կաշվի վրա բծեր կամ բշտիկ-
 ներ են դուրս գալիս:

Ի՞նչպես պիտի ճանաչել լավ ջուրը, Յեթե ջուրը
 պարզ է ու ապակու պես թափանցիկ, յեթե նրա
 մեջ կեղտոտություններ չեն լողում (մաղ, ծղնոտ,
 խոտ), յեթե ամանի տակ կեղտ չի նստում, ջուրը
 լավն է. այդպիսի ջուրը վոչ գույն է ունենում, վոչ
 հոտ, ու ֆաասակար չի:

Ամենալավ ջուրը աղբյուրների ջուրն է:

68. Աշոտի ձեռնափայտը.

1

Աշոտն ու Տիգրանը մի անգամ այգի գնացին,
 ուռենու ճյուղերից իրենց համար փայտեր կտրե-
 ցին: Յերբ առվի ափին նստած խոսում էյին, Տիգ-
 րանն իր փայտը դեն գցեց, իսկ Աշոտը տնկեց առվի
 ափին փխրուն ու խոնավ գետնի մեջ:

Անցավ մի քանի ամիս: Ամառվա վերջն էր:
 Տիգրանը մի անգամ մենակ նույն տեղը յեկավ և
 ինչ տեսնի՝ Աշոտի տնկած փայտը ճյուղեր է տվել.
 ուրախացավ և այդ որից սկսեց խնամել նրան: «Թող
 աճի, Աշոտից հիշատակ կմնա»,—մտածեց նա:

2

Շատ տարիներ անցան:

Աշոտն ու Տիգրանը կրկին միասին յեկան այդ
 կողմերը զբոսանքի: Աշոտը նկատեց առվի ափին մի
 գեղեցիկ կանաչ ուռենի, վոր ճյուղերը կախել էր
 ջրի վրա:—«Յեկ նստենք այս ուռենու տակ»,—
 ասաց նա Տիգրանին:

— Յես հաճախ նստում եմ ու քեզ հիշում,—
 պատասխանեց Տիգրանը:

— Ինչո՞ւ ինձ,—հարցրեց Աշոտը:

— Հիշում ես, վոր ուռենուց կտրածդ փայտը
 տնկեցիր այստեղ: Ահա այն փայտն է, վոր աճել,
 ուռենի յե դարձել. մենք այժմ նրա տակն ենք
 նստած:

— Ուռենու ճյուղեր բերեք, տնկեցեք ձեր առվի ափին:

69. Ծառատունկը.

Այս շաբաթ մեր դպրոցում ամենքն էլ ծառատունկի մասին են խոսում: Միքանի անգամ եքսկուրսիա յենք արել դեպի անտառ, սղոցարան, ատաղձագործարան. գնացել ենք այգի. հիմա մենք շատ լավ գիտենք, թե անտառն ինչ ոգուտներ ետալիս մեզ:

Մեր դպրոցը պատրաստվում է շուքով տոնելու ծառատունկի օրը:

Մեծ աշակերտները գրել էյին «ԱՄԵՆ ՄԻ ԱՇԱԿԵՐՏ ՄԻ ԾԱՌ ՏՆԿԻ» և կպցրել էյին դպրոցի դռանը:

— Բա դուք ինչ եք անելու, — հարցրեց ուսուցիչը:

— Ինչ վոր ասեք՝ կանենք. փոս էլ կփորենք, ծառ էլ կտնկենք, շուր էլ կկրենք, — պատասխանեցինք մենք:

— Լավ, — ասաց ուսուցիչը, — մենք աշխատանքն այնպես կբաժանենք, վոր ձեզ հեշտ աշխատանք ընկնի. դուք դեռ փոքր եք:

Մենք վորոշել էյինք՝ ճանապարհի յերկու կողմը ծառեր տնկենք:

Մեծ աշակերտները փոսեր փորեցին:

Փոսերն եղպես միքանի օր մնացին:

Կիրակի օրը շատ մարդ եր հավաքվել. մենք էյինք, կոմյերիտականները, կուսակցականները, կանայք. բոլորս էլ կարմիր դրոշակներով:

Տնկիները բերել էյին պատրաստել. սկսեցինք տնկել. Ձուռնեն ամուսն եր:

Մենք ուրախ-ուրախ աշխատում էյինք. իսկա-կան տոն եր. 300 ծառ տնկեցինք:

— Պատրաստվեցեք ծառատունկի տոնին:

— Տնկիներ ձեռք բերեք:

— Ձեր դպրոցի բակում ու դպրոցի շուրջը ծառեր տնկեցեք:

— Գյուղացիների հետ մասնակցեցեք ծառատունկի տոնին:

— Պահպանեցեք անտառները:

70. Մեր բանջարանը.

Յերբ դպրոցի բակը խմբերի բաժանեցին, մեզ էլ մի կտոր հող տվին:

— Տեսնենք՝ դուք ինչ եք անելու, — ասում էյին մեծ աշակերտները:

Մենք չգիտեյինք ինչից սկսենք, ինչ ցանենք: Գործն առաջ չեր գնում:

— Յեկեք ձեզ ոգնեմ, — ասաց Վարդանը:

Նա շատ բան գիտեր, պիտներ եր:

Նրա հետ մենք մեր հողամասը մարգերի բաժանեցինք:

Հետո այդ հողը փեյնեցինք, քարերից մաքրեցինք. Վարդանը մեզ սերմեր տվեց. ինքը տանը թրջել եր, ու սերմերն արդեն ծլել էյին:

Ցանեցինք լոբի, սիսեռ, տակ, բոդկ, տեսակ-տեսակ ծաղիկներ:

Միքանի գլուխ սոխ էլ տնկեցինք. Ջրեցինք, հերթապահներ նշանակեցինք, մեր բանջարանոցին հրակելու համար:

— Տեսեք ես առաջիններին, է, վերջը գործը

զլուխ բերին,—ասում եյին մեծ աշակերտները մեր բանջարանոցի կողքով անցնելիս:

- Ձեր դպրոցը բանջարանոց ունի:
- Ձեր խումբն իր անկյունն ունի:
- Ի՞նչ եք ցանել ձեր անկյունում:
- Ի՞նչպես եք բաժանել ձեր մեջ աշխատանքը:
- Ի՞նչպես եք հետևում բանջարանոցին:

71. Պարտիզի յեւ բանջարանոցի վնասատուները.

Յերբ թրթուրները դուրս գան, կտրեցեք ծառի կամ բույսի ճյուղը, վորի վրա թրթուր ե նստած. բերեք դպրոց, ջուրը դրեք ու տուփով ծածկեցեք: Տուփի մի պատը կտրեցեք, տեղը թանգիֆով փակեցեք. մյուս պատերը մախաթով ծակծկեցեք:

Դիտեցեք և պատասխանեցեք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ ե թրթուրը—տերև՞ ե, ծաղիկ, թե՞ մի ուրիշ բան:

2. Բույսին ի՞նչ վնաս ե տալիս:

3. Փնտռեցեք այդ վնասատուի հետքերը ձեր բանջարանոցում կամ պարտիզի ծառերի վրա:

4. Դիտեցեք՝ ո՞վ ե ոգնում մարդուն այդ վնասատուի հետ կռվելու: Այդ նպատակով գնացեք բանջարանոց կամ պարտեզ ու հետևեցեք՝ ի՞նչ թռչուններ են հավաքվում այնտեղ և ի՞նչ են անում: Յեթե գիտեք նրանց անունները, նշանակեցեք: Յեթե նկատեք այնպիսի թռչուններ, վորոնց առաջ

յերբեք չեք տեսել, նշանակեցեք նրանց մեծությունը, գույնը, դիտեցեք՝ ի՞նչ են անում պարտիզում և այս բոլորը նույնպես գրի առեք:

Թռչունները վոչնչացնում են մոծակներին և ճանճերին, վորոնք վարակիչ հիվանդություններ են տարածում:—Թռչուններն ուտում են վնասակար միջատներին—խնայեցեք թռչուններին:

72. Մեր աշխատանքը.

Մեր բանջարանոցը պիտի ցանեյինք: Ուսուցիչը յերկու տեղից սերմեր եր առել—կոոպերատիվից ու դանթարի տակից:

Մենք լոբու, արևածաղկի ու սիմինդրի հատիկներ վերցրինք, պարտիզի մի անկյունում ցանեցինք՝ կոոպերատիվից առած սերմը ջուկ, դանթարի տակից առածը՝ ջուկ: Են վոր կոոպերատիվից եյինք առել, լափս եր՝ 20 լոբուց բուսավ 18-ը, 20 արևածաղկից՝ 15-ը, 20 սիմինդրից՝ 17-ը: Են վոր մասնավոր տեղից եյինք առել, վատն եյին՝ 20 լոբուց բուսավ 12-ը, 20 արևածաղկից՝ 10-ը, 20 սիմինդրից 12-ը:

Ուրեմն կոոպերատիվից գնած սերմերն ավելի լափս եյին:

Վորոշեցինք աղյուսակը կազմել ու կախ տալ դպրոցում:

- Դուք ել այսպիսի փորձեր կատարեցեք:
- Դրի առեք կատարած փորձերը:
- Եթևկուրսիա կատարեցեք դեպի խորհրդային մոտակա անտեսությունը և ծանոթացեք նրանց փորձերին:

73. Պահապաններ.

Գարուն ե. արևն այրում ե: Պապիկը նստած՝
արկղ ե շինում տախտակներից:

— Ի՞նչ ես անում, Պապիկ:

— Տնակ եմ շինում, տնակ, շուտով պահա-
պանները կգան, պետք ե տեղ տալ նրանց:

— Ի՞նչ պահապաններ, ո՞վքեր են:

— Մի՞թե չգիտեք. մեր ժիր, խելոք սարյակ-
ները, վոր մաքրում են բանջարեղենը վորդերից ու
խիունջներից:

— Ել ի՞նչ ոգտավետ թռչուններ գիտեք:

74. Կովն ու գելագուավը.

Մեր կովը բակն էյին կապել, խոտ եր ուտում:
Մեկ ել հանկարծ մի գելագուավ յեկավ, մեջքին նըս-
տեց ու սկսեց մեջքը կտցել:

Չլինի՞ թե կովի մեջքը ցավացնի:

Իսկի ել չե:

Հանգիստ կանգնել ե իր համար, խոտ ե ուտում,
իսկ գելագուավը կտցում ե հա կտցում:

Բայց ինչո՞ւ:

Ահա թե ինչու: Այժմ գարուն ե, կովերը փո-
խում են իրենց մազը. գելագուավն ել գարնանը
բուն ե շինում. մազ ե պետք, վոր ձվերի համար
տաք տեղ պատրաստի: Գելագուավը հանում ե կովի
հին մազերը. համ նրան ե ոգուտ տալիս, համ իրեն.

կովի կաշին քոր ե գալիս, պատերին ու ծառերին ե
քսվում, վոր հին մազից ազատվի:

Գելագուավը թռավ: Կտցին մազ կար: Տա-
րավ բունը: Չվերը տաք տեղ կունենան: Եղ ձվերից
հետո փոքրիկ ճուտեր դուրս կգան:

75. Անճոռնի ճուտիկը.

Յերեք շաբաթ թուխսը վեր չեր կենում ձվերի
վրայից: Տասներկու բրդոտ ճուտեր դուրս էյին
յեկել, մնում եր միայն մի կանաչագույն փոքրիկ ճու:

Վերջապես մի առավոտ թուխսը նկատեց, վոր
ձվի ներսից մեկը թրխկթրխկացնում ե: Սաստիկ
ուրախացավ, իսկույն ջարդեց ճուն իր ամուր կտու-
ցով, ու միջից դուրս յեկավ ճուտիկը:

Սա նման չեր մյուս ճուտիկներին: Ավելի բրդոտ
եր, ավելի դեղին, վոտիկները կարճ-կարճ, գլուխը
լայն, կտուցը տափակ:

— Ես ի՞նչ անճոռնի յե,— մտածեց մայրը, մի
քիչ տխրեց, բայց շուտով ինքն իրեն սիրտ տվեց
թե՛ վոչինչ, կմեծանա, կգեղեցկանա:

Հավաքեց իր բոլոր ճուտիկներին ու հպարտ-
հպարտ կուրսկալով գնաց բակը: Փոքրիկներն աշ-
խուժ ու արագ վազվզում էյին նրա շուրջը. միայն
նորածինը քայլում եր ծանր ու որորվելով:

Մայրը տարավ նրանց առվի ափը քուլջուջ անե-
լու: Անճոռնի ճուտիկը ջուրը տեսավ թե չե, ըն-
կավ մեջը:

Մայրը սարսափած ճչում եր, կանչում, թևերը

Թափ տալիս, նետվում դեպի ջուրը: Ճուտիկներն
եւ ծվում եյին, դեռ ու դեռ ընկնում:

Ամբողջ բալն իրար անցավ. հավերը կրկնացին,
աքլարը բարձր ծղրտաց, փքված հնդկահամը եւ
ամուր զուտզուտում եր:

Իսկ անճոռնի ճուտիկը թեթեւ շարժում եր իր
թաղանթավոր թաթերը ու հանգիստ լող տալիս
ջրի յերեսին:

Պառավ նանը լսեց թուխսի ճիչն ու բալի աղ-
մուկը. դուրս վազեց, տեսնի՜ ինչ ե պատահել:
Ու խփեց ծնկանը.

— Վա՛յ, քոռանամ յես, ես ի՞նչ եմ արել. հավի
տակ բաղի ձուլ յեմ դրել:

— Քանի որ ե հավը թուխս նստում:

— Իսկ բաղը, սազը:

76. Դժվար հանելուկ.

Պուղին թաշկինակով տասը ձուլ յեր տանում
տուն: Ճամպին պատահեց իր ծանոթին ու ասաց.

— Թե իմանաս՝ թաշկինակումս ինչ կա, սրա
ձվաձեղից քեզ եւ կուտացնեմ:

— Ձուլ, — պատասխանեց ծանոթը:

— Վա՛հ, — զարմացավ խելոքը. — եդ վրձնց իմա-
ցար: Դե, են եւ ասա՝ քանի հատ ե: Թե եդ եւ իմա-
ցար, բոլոր տասն եւ քեզ կտամ:

— Տասը:

— Առ, ախպեր, եդ եւ իմացար. — ասավ Պուղին
ու թաշկինակով ձուն տվավ ծանոթին:

77. Թուչուններ

ԸՆՏԱՆԻ ԹԹՉՈՒՆՆԵՐ ԵՆ՝

Հավը, բաղը, սազը, — եւ ի՞նչ ընտանի թուչուն-
ներ գիտեք:

ՅԵՐԳՈՂ ԹԹՉՈՒՆՆԵՐ ԵՆ՝

Սոխակը, կկուն, կուունկը, — ուրի՞շ:

ՎԱՅՐԻ ԹԹՉՈՒՆՆԵՐ ԵՆ՝

Բուն, ուրուրը, — ուրի՞շ:

* * *

1. Ի՞նչ լողացող թուչուններ գիտեք:

2. Ի՞նչ ձև ունեն նրանց թաթերը:

3. Ի՞նչ թուչուններ են ապրում ճահիճներում.
Ի՞նչ ձև ունեն նրանց վոտքերը, վիզը, կտուցը:

4. Թուչունները տարվա վճր ժամանակն են
բներ շինում:

5. Թուչունները ինչից են բներ շինում:

6. Ի՞նչպես պետք ե ճանաչել լավ ձուն՝ առանց
ջարդելու:

7. Սովորեցեք կավից թուչուններ շինել:

78. Լորիկ.

Առավոտուն փչեց հով,
արտը ծփաց, դարձավ ծով,
արտի միջից թռավ լոր,
թռավ, ընկավ ձորե ձոր:

Լորիկ, լորիկ, ես տարի
արտս արել եմ գարի.
ուր վոր երթաս՝ շուտ արի,
արտիս միջին ծվարի:

79. Պատիկ ծիտը.

Պատիկ ծիտ եմ
ծախ ցեղից,
ծառաստանի
Ծառոց գեղից:
Իմ պապերին
ծիտ են ասել,
ծիտ անունը
ինձ ե հասել:
Հիմի ել յես
ծիտ պապիս պես
կըծկվամ,
կըթուվում:

80. Մեղուները.

Գարունը յեկավ. արևը հալեց, փախցրեց դաշ-
տերի ձյունը: Որը տաք եր, արևը վառ:

Մեղունները փեթակից դուրս յեկան. թռան խըն-
ձորենու մոտ:

— Միթե խնձորենին խեղճ մեղունների համար
վոչինչ չունի. չե՞վոր նրանք ամբողջ ձմեռը սոված
են յեղել:

— Վո՛չ, մեղունները շատ շուտ են դուրս թռել,
դեռ խնձորենու ծաղիկները թագնված են բողբոջ-
ների մեջ:

Մեղունները թռան դեպի բալենին:

— Միթե բալենին ծաղիկներ չունի խեղճ մե-
ղունների համար:

— Միբանի որ հետո գան՝ գուցե լինի, այդ-
պես շուտ վոչ մի ծաղիկ բացված չի լինի:

Մեղունները թռան կակաչի մոտ, մտան նրա

գունավոր բաժակը. բայց այնտեղ վոչ մեղր կար,
վոչ հոտ:

Խեղճ մեղունները սոված, տխուր ուզում էին
յետ թռչեն փեթակը, յերբ հանկարծ թփի տակ տե-
սան մուգ կապույտ փոքրիկ ծաղիկը—մանուշակը:

Մանուշակը բաց եր, մեջը լիքը քաղցր բուրավից
հյութ:

Մեղունները կերան, խմեցին, յետ թռան կուշտ,
ուրախ:

81. Մեղու.

Գարուն, ամառ ամեն որ
նա գնում ե դաշտ ու ձոր,
աշխատում ե միշտ անվերջ,
մեղր ե փնտռում ծաղկանց մեջ:

Իսկ յերբ փչե ցուրտ բամին,
ծաղիկներն ել թառամին,
նա իր ժողված պաշարով
կապրի ձմեռն ապահով:

— Ել վո՛ր միջատներն են ձմեռվա պաշար հավաքում:

82. Մեղու.

Պզզան, պզզան, պզպզան,
պատիկ մեղու տղազան.
դաշտ ու հովիտ կըրճես,
բարձր սարեր կթռչես.
սուսան սմբուլ կծծես
ու վոտներով թավամազ
փոշի առած տուն կգաս:

83. Ընկերոջն ազատելու համար.

Մըջուկները շարժվում եյին ճանապարհի վրա, անվերջ գնում ու գալիս. ամեն մեկն իր գործին եր: Չարաճճի Հայկը վերցրեց կավի մի փոքրիկ գընդիկ ու դրեց մըջուկներից մեկի վրա: Խեղճ մըջուկը չեր կարողանում տակից դուրս գալ: Իսկ Հայկը նայում եր, թե ինչ կլինի:

Շարժվում են մըջուկները. գնում են ու գալիս, բայց խեղճին չեն նկատում. ամեն մեկն իր գործին եր: Բայց ահա մի մըջուկն կանգ առավ, տեսավ, վոր ընկերը վտանգի մեջ ե, ուզեց ոգնել նրան կավի տակից դուրս գալու: Շատ չարչարվեց, չկարողացավ: Արար-արագ վազեց ինչ-վոր տեղ:

Քիչ անց շատ մըջուկներ թափվեցին ոգնության. հավաքվեցին գնդիկի շուրջը: Մեծ ե կավե սարը, բայց չէ վոր մըջուկները շատ են: Նրանք միասին աշխատանքի կպան: Մի-մի կորեկի չափով սարը քանդում եյին ու տանում, դեն գցում: Շուտով ամբողջ կավը կրեցին, և մըջուկը ազատվեց:

— Դիտեցեք մըջուկներին:

84. Անկյունում.

Մուկուկը կանգնած եր տան անկյունում. տեսնում ե վոստայն, սարդն ել վրան. Էնքան ել թաթեր ունի, յերկար, շատ յերկար: Սարդը մոտեցավ վոստայնի ծայրին ու հանկարծ ընկավ:

— Կմխավի,—մտածեց Մուկուկը: Մեկ ել տեսավ՝ ցածում մի ուրիշ վոստայն, բարակ թելով

միացած վերևի վոստայնին, հենց այդտեղ ել նրա տեց սարդը:

— Տես, յերկու հարկանի տուն ունի,—մտածեց Մուկուկը: Հանկարծ «թըփ» —վերին հարկը միանգամից յերկու ճանճ ընկան: Մեկը փախավ, մյուսը խճճվեց մնաց:

Վերևի վոստայնը ցնցվեց ու շարժեց ցածի վոստայնը այն թելով, վորով սարդն իջել եր: Սարդը կծկվեց, ու հանկարծ սկսեց արագ-արագ բարձրանալ թելով: Ճանճը թափ տվեց իրեն, պուկ յեկավ ու թռավ: Մուկուկն ուրախացավ, վոր ճանճն ազատվեց:

— Դիտեցեք սարդը, նկարագրեցեք:

85. Գորտը.

Յերեխաները ճահճի մոտ խաղում եյին:

Ստեփանը մոտեցավ ճահճին.

— Յեկեք, յերեխեք,—ասաց նա ընկերներին.—այ ես շերեփուկները հետո գորտեր են դառնալու.

— Ի՞նչ, ես սև պոչավոր գնդերը գորտեր եմ. չէ, չեմ հավատում,—ասաց Պարույրը:

— Չես հավատում, մի աման բեր, միքանի շերեփուկ բռնի, տանր տանը պահիր, յերբ մեծանան—իսկական գորտ կդառնան:

Պարույրը մի կաթի հին բանկա գտավ, նրա մեջ միքանի շերեփուկ վերցրեց, տուն տարավ:

Պարույրը շերեփուկները տանը պահում եր մի մեծ ամանում, ամեն օր ջուրը փոխում և կերակրում եր բույսերով:

Միքանի որից հետո շերեփուկների յետևի վոտ-
ները դուրս յեկան:

— Ձե, սրանք գորտեր չեն — մտածում եր
Պարույրը, — սրանք պոչավոր են:

Միքանի որից հետո պոչերն ել կարճացան,
նրանց գույնը փոխվեց:

— Հա, ճիշտ վոր, Ստեփանի ասած շերեփուկ-
ները գորտեր դարձան:

— Այդ փորձը դուք ել արեք:

86. Հատիկի գարթները.

Ցորենի հատիկը պառկած եր հողի տակ:

Յեվ հատիկի մեջ քնած եր փոքրիկ սաղմը.
Քնած եր, ինչպես մի փոքրիկ մանկիկ տաք որորո-
ցի մեջ. քնած եր ամբողջ ձմեռը:

Գարնան արևի շողը յեկավ տաքացրեց:

Յեվ հատիկի մեջ զարթնեց սաղմը. Չարթնեց,
սաստիկ քաղց զգաց, սկսեց ծծել իր մոտի պաշարը.
Ծծեց, ծծեց ու մեծացավ. պատռեց պարուրներն
ու արմատները խրեց ցած, փափուկ հողի մեջ,
նոր կերակուր վորոնելու:

Իսկ արևի ջերմությունը շարունակ քաշում եր
նրան վերևից, ու սաղմը ձգվում եր դեպի այն
կողմը, դեպի վեր:

Ձգվեց, ձգվեց, ու նրա դալար ծիլը դուրս նայեց
հողի մի կողմի տակից:

Ինչ տաք եր, ինչ պայծառ ու ինչ ազատ նրա
շուրջը:

Առավոտյան հովիկը քնքուշ գրկեց նրան, ցողի
մի կաթիլ դրեց նրա կիսաբաց թերթիկին:

* * *

Արի գնանք, յեղը ջան,
համ վար անենք, համ ել ցան,
աշխատանքի որերը
հրես յեկան, մոտեցան:

Գութանը դու կքաշես,
մաճկալդ ել կլինեմ յես,
են գլխիցը ես գլուխ
ես փեշակն ե պահել մեզ:

87. Հատիկ.

Լույսը բացվում ե, շուտ արտը գնամ,
պատռեմ սուր խոփով յես կուրծքը հողի,
իմ սիրուն հատիկ, բեզ նրան պահ տամ
մինչև որերը ամռան արևի:

88. Արոր.

Անա ծագեց կարմիր արև,
տաք և պայծառ ե որը,
դեհ, քաշեցեք, սիրուն յեզներ,
առաջ տարեք արորը:

Վարը վարենք, ահոս փորենք,
խոր ահոսներ հողի մեջ,
սերմը ցանենք, վոր հունձ հնձենք,
խուրձեր դիզենք կալի մեջ:

89. Պետական ապահովագրությունը.

Մեր Քրդեվան գյուղը սարի ծերին է. ամեն տարի մեր արտերը կարկուտը տանում է.

«Վորտեղ կորած կարկուտ կա, մեր գյուղի վրա վեր կգա», —ասում են գյուղացիք:

Մի անգամ մեր գյուղը մի հրահանգիչ յեկավ. ասաց՝—յես Պետապի կողմից եմ յեկել. ձեր արտերը ապահովագրեք. յեթե կարկուտը տանի, պետութունը ձեր փասը կտա:

Գյուղացիք կասկածում էին. ով գիտի՝ մեզնից փող են պոկում. բայց մտածեցին, խոսեցին, վերջը վորոշեցին ապահովագրել ցանքսերը: Ելի կարկուտ յեկավ, արտերը սրբեց տարավ: Գյուղացիք անհայ մնացին:

Պետապը վրա հասավ. փասները տվեց: Գյուղացիք աչքներին չեյին հավատում, բայց փողերը գրպանում զրնգում էին. չհավատալու ել ինչ կար:

Գյուղ-վարկային ընկերութունն ել ոգնեց. գյուղից փող հավաքեց ու Ռուսաստանից լավ եժան ցորեն բերել տվեց:

— Ես կարկուտի ձեռից խորհրդային իշխանութունը մեզ լավ ազատեց, —ասում էին գյուղացիք:
— Անասուններն ել ապահովագրենք. մեր ոգուսն է:

— Ձեր գյուղի արտերն ապահովագրված են:

— Ել ինչ կարելի յե ապահովագրել:

— Հարցրեք ուսուցչին՝ ինչ ոգուտ է տալիս ապահովագրութունը:

— Կարգացեք խրճիթ-ընթերցարանում պետական ապահովագրության կանոնները:

90. Սարի լանջը.

Սարի լանջը մահճակալ,

ուխայ, ուխայ, ինչ փափուկ է,

չեչոտ բարը գլխակալ,

ուխայ, ուխայ, ինչ կակուղ է,

մի հին կարպետ ուսերին,

ուխայ, ուխայ, ինչ նախշուն է,

այս է հովի անկողին,

ուխայ, ուխայ, ինչ սիրուն է:

91. Վոչխարները.

1.

Ձմեռը մեր վոչխարները սարումն էին. իմ մեծ յեղբայր Սաքոն եր պահում: Վոչխարները ձյան տակից խոտ էին գտնում, արածում:

Յերը շատ ձյուն յեկավ, Սաքոն նոր եր սկսել նրանց կերակրել չոր խոտով:

Գարնանը, յերը ձյունը հալվեց, կանաչ խոտը բուսավ, ելի վոչխարները արածելու դուրս յեկան:

Գարնան սկզբին մեր վոչխարները ծնեցին. ամեն մինը մի գառ բերեց. միայն մեկը յերկու գառ ուներ: Վոչխարներին Սաքոն եր հանդը տանում, գառներին յես:

Հանդում գառներն արածում էին, յես ել շվի էյի փշում, մանուշակ քաղում, փնջեր անում, բերում, մորս տալիս:

Կեսորին հոտերը բերում, խառնում էինք իրար, մեր տալիս. կանայք կթում էին, կաթը լցնում մեծ կաթսաները:

Յերբ շոգն ընկավ, հայրս ասաց.

— Վոչխարի խուզելու ժամանակն է:

— Դե վոր խուզելու յեք, թող մի լավ լողաց-
նենք, եղ կեղտը վրաներից թափենք, — ասաց մայրս:

Մենք շատ ուրախացանք. մյուս ուր վաղ առա-
վոտյան վոչխարները քշեցինք դեպի ձորակի գետը:

Դետակը փոքր եր. ջուրը կապեցինք, յեկավ
հավաքվեց, խորացավ:

Մենք բռնում էյինք վոչխարներին, մեկ-մեկ
ջուրը կոխում, պահում. մերս լվանում եր, մաք-
րում, բաց թողնում. վոչխարը դուրս եր պրծնում,
փռտում, իրան թափ տալիս, փախչում. յերևի
լողանալն ենքան ել դուր չեր գալիս:

Այդպես բոլոր վոչխարներին լվացինք:

Մյուս ուր հայրս ու Սաքոն մեծ-մեծ յերկար
մկրատներով խուզեցին վոչխարների բուրդը. յես
ոգնում էյի նրանց, իսկ մայրս ու քույրս ել բուրդը
հավաքում էյին, տոպրակները լցնում:

Հետո քույրս այդ բուրդը գզեց, իսկ մայրս թել
մանեց:

Այդ թելից մեզ համար տաք վերնաշապիկներ,
գուլպաներ, ձեռնոցներ գործեցին, քույրս իր հա-
մար շալ գործեց:

Մնացած թելերը մայրս գուլնգուլն ներկեց,
վոր ձմեռը կարպետ, խալիչա գործեն:

Բացի բոլոր վոչխարն ելի ինչ է տալի:

92. Ինչպես մենք խուզվեցինք.

1.

Մեր բոլորի մազերը յերկարել ու խճճվել էյին:
Բժիշկը բացատրեց, թե յերկար մազերը կեղտ ու
փոշի յեն հավաքում, գլուխը լավ չի մաքրվում լվա-
նալիս: Վորոշեցինք բոլորով խուզվել: Բայց ի՞նչպես,
ինչո՞վ. և ո՞վ պիտի խուզեր:

Թե մկրատն առնես ու խուզես, բոլորի գլուխները
բոստան-բոստան կանես, լավի չի:

Ուսուցիչն ասաց. «Մեքենա կճարեմ, մեծերից
մեկը թող բոլորիդ խուզի»:

Զարմացած մնացինք, թե եղ ի՞նչ մեքենա յե:

2.

Յես կարծում էյի, թե մեքենան կլոր պղնձի
պես մի բան կլինի, գլուխներս կկոխեն այնտեղ ու
խուզված կհանենք: Սեթիկն ել կարծում եր, թե մե-
քենան գերանդու նման կլինի ու մազերը խոտի
պես կհնձի: Յերբ յերեք ու հետո ուսուցիչը բերեց
մեքենան, բոլորս ձայն տվինք. «Հը՛մ, այ թե ինչ-
պիսի մեքենա յե. կարծում էյինք՝ սարսափելի բան
կլինի»:

3.

— Այսոր դասերից հետո պիտի խուզվեք, — աս-
աց ուսուցիչը. — ո՞վ առաջինը կնստի:

— Յես, յես, յես... լավեցին միքանի ձայներ:
Լեռնը շատ եր վախենում, յետ-յետ գնաց դեպի
դուռը:

Ամենից առաջ նստեց Անտոնը. ահանջները մա-
զերի տակ չեյին յերևում: Ուսուցիչը լրագիրն անց-

կացրեց Անտոնի վիզը, մեկն ել փռեց վոտքերի տակ
ու սկսեց խուզել: Հետաքրքրությամբ նայում էյին:

Մեծ աշակերտները մեջ ընկան, սկսեցին փոք-
րերին խուզել:

Մյուս ուր բոլորիս գլուխները մաքուր էյին:

— Ձեր խմբում բոլորը խուզված են:

— Ամիսը մի անգամ խուզվեցեք:

— Ձեր կոպերատիվի փողերով դպրոցի համար խուզելու մե-
քենա գնեցեք:

93. Մեր կոնկուրան.

Յես տասներկու տարեկան էյի. Մորս հետ ապ-
րում էյի Աշտարակում: Մայրս մանկատանը լվա-
ցարարուհի էր: Մայրս հիվանդացավ, ինն ու պառ-
կեց ու մեռավ:

Յես շատ լաց յեղա:

Հետո մորս թաղեցին, իսկ ինձ ընդունեցին ման-
կատուն:

Շատ լավ եր մանկատանը. այնտեղ սովորում
էյի, բայց ելի հաճախ հիշում էյի մորս. ուզում էյի
լաց լինել, բայց չէյի լալիս, վորովհետև պիտներ էյի:

Աշտարակից վոչ հեռու մի գյուղ կա—Թաքիա
յե կոչվում: Մեծ վորբերն այնտեղ կոմմունա ու-
նեյին: Իրենք էյին վարում, ցանում, բանջարանոց
պատրաստում:

Աշտարակում յես ապրեցի չորս տարի:

Բայց ահա մի անգամ մեզ մեծահասակներին
կառավարիչը կանչեց ու ասաց.

— Յերեխեք, ուզում եք կոմմունա գնալ. այն-
տեղ այս ընկերիս աշխատանքի կարիք կա. շատ
հողեր են ստացել, մշակելը չեն հասցնում:

Մեզնից միայն յերեքը չուզեցին. արհեստավոր
էյին ուզում դառնալ:

Մյուսներս ուրախությամբ համաձայնեցինք և
սկսեցինք ճանապարհվելու պատրաստություն տես-
նել:

Կիրակի յեր: Հավաքվեցինք, բոլորին մնաս-բարև
ասացինք: Կառավարիչը ճառ խոսեց. ասաց, վոր
մենք կյանք ենք մտնում, ու հաջողություն ցան-
կացավ մեզ: Մենք լաց յեղանք, հետո նորից ու-
րախացանք ու ճանապարհ ընկանք:

Ճաշի մոտ մենք արդեն կոմմունայում էյինք:
Աշխատանքը յեռում եր, բոլորն աշխատում էյին:

Մեկը փորում եր, մեկը մարգեր եր պատրաս-
տում, մեկը հատիկներ մաքրում:

Ուրախ դիմավորեցին մեզ, տեղավորեցին. մեր
համբերությունը հատնում եր. իսկույն աշխատան-
քի կպանք:

Սկզբում մեզ համար ծանր եր, բայց հետո
վարժվեցինք և մեզ շատ լավ էյինք զգում.

Մեր կոմմունան որեցոր ընդարձակվում ե.
նոր տներ ենք շինում, նոր մարագներ: Այս տարի
մեզ համար դպրոց շինեցինք. բոլորը գյուղատնտե-
սություն են սովորում:

Յերբեմն գալիս էյինք Աշտարակ մեր փոքրահա-
սակ ընկերների մոտ ու միասին ուրախ ժամանակ
անցկացնում:

Կիրակի յեր:

Շուկայում մեծ բազմութիւն կար: Մեկն առնում էր, մյուսը՝ ծախում, մի ուրիշը պարապութիւնից ման էր գալիս, թամաշա անում: Հանկարծ լսվեց.

— Բռնեցեք, բռնեցեք:

Տաս տարեկան մի տղա, պատառոտված հագուստներով, մեշոկն ուսին գցած փախչում էր, իսկ նրա յետևից վազում էին յերկու յերիտասարդ:

— Բռնեցեք, փող է գողացել:

Յերեսային բռնեցին: Յերիտասարդները հասան: Մեկը բռնեց յերեսայի ձեռքից, ուզում էր փողը խլել. մյուսը մոտեցավ ու պինդ ապտակեց յերեսին:

Յերեսան լաց յեղավ, փողը վայր ձգեց, պոկ յեկավ, մի քար վերցրեց ու առ հա ապտակողին: Քարը կպավ յերիտասարդի գլխին. գլուխն արնեց:

— Այ դոչնդ, — ասաց կանգնածներից մեկը:

Շատ ժողովուրդ էր հավաքվել:

Յերիտասարդն արյունը տեսավ, բռնեց գետին գլորեց յերեսային, սկսեց վոտքով խփել:

Բոլորը կանգնած նայում էին:

Բայց ահա մեկը բռնեց յերիտասարդի ոձիքից

ու դեն հրեց:

— Ինչո՞ւ յես հրում, — ճշաց յերիտասարդը:

— Ինչո՞ւ յես յերեսային ծեծում:

— Փող է գողացել:

— Ե, ինչ անենք, պիտի ծեծե՞ս:

— Քեզ ինչ, դու ո՞վ ես:

— Յես յերեսաների ոգնության տեսուչն եմ:

— Ե, ինչ, գողերի՞ն ես ոգնում:

Տեսուչը վոչինչ չասաց, սուլիչը հանեց, սուլեց, յեկավ միլիցիոները. տեսուչը հրամայեց ձերբակալել յերիտասարդին, իսկ յերեսային աշխատանքի գաղութ տանել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԱՂՈՒԹՈՒՄ.

Թը'խկ-թը'խկ-թը'խկ, — ծեծեցին գաղութի դուռը:

— Հը', ո՞վ է. — ձայն տվեց դռնապանը:

— Բնց արեք, յերեսա յենք բերել:

Գաղութի դուռը բացվեց, յերեսային ներս բերին բազն ու տարան կառավարչի մոտ:

— Անունդ ի՞նչ է, — հարցրեց կառավարիչը:

— Սերոբ:

— Ազգանո՞ւնդ:

— Չգիտեմ:

— Քանի՞ տարեկան ես:

— Չգիտեմ:

— Փողը վերցրե՞լ ես:

— Վերցրել եմ:

— Յերևի սոված էյիր, դրա համար ել վերցրել ես:

— Հա, համ սոված էյի, համ ել խանի փող չունեյի:

— Ինչո՞ւ էյիր գնում խանը:

— Քնելու տեղ չունեյի:

— Այստեղ քեզ կհագցնենք, կկերակրենք. այստեղ կապրես ու կսովորես. ել ուրիշների փողը չես վերցնի: Ուզո՞ւմ ես, — հարցրեց կառավարիչը:

— Ուզում եմ:

— Ընկեր Ասատուր,—ասաց կառավարիչը դաստիարակին,—ահա քեզ նոր աշակերտ լավ տղա յեյերևում, լավ կսովորի:

Դաստիարակը տարավ Սերոբին:

3

ՍԵՐՈՐԸ ՀՅՈՒՄՆ Ե.

Միքանի որ հետո Սերոբն արդեն աշխատում էր գաղութի հյուսնոցում:

Խը՛շշ, խը՛շշ,—տաշում էր Սերոբը տախտակը:

— Սերոբ,—ձայն տվեց ընկերը:

— Հը:

— Վաղը կինո յենք գնում, գիտե՞ս:

— Գիտեմ:

— Արի եստեղից ծկվենք դանթարը, մրգից բանից թռցնենք:

— Չե՛, ել եստեղից գնացողը չեմ: Եստեղ լավ է, արհեստ կսովորեմ, մարդ կդառնամ: Խուժանուլթյուն անելուց զգվեցի:

Խը՛շշ, խը՛շշ, խը՛շշ,—տաշում է Սերոբն ու մտածում:

— Կմեծանամ, կմտնեմ հյուսնոցի արտելը, փող կհավաքեմ, Լենինականից մորս կբերեմ: Թե՛ չե՛ պառավել ե, ու մանկատանը լվացք անելը ծանր ե նրա համար:

— Ձեզ մոտ անապատան յերեխաներ կան:

— Դուք ի՞նչ եք արել նրանց ոգնելու համար:

95. ԿՈՄՈՒՆԻԱ.

Պետիկը լսել էր կոմմունայի մասին, բայց չըգիտեր, թե ինչ բան է այդ:

Հարցրել էր ընկերներից, նրանք ել չեյին իմացել: Առավոտյան հայրն ասաց Պետիկին:

— Յեկ միասին կոմմունա գնանք:

Պետիկն ուրախացավ, բայց միքիչ ել վախեցավ: Յեկան բակը, ուր առաջ աղերն եյին ապրում, ու նայում են:

— Բաս կոմմունան ուր է:

Մարգագետնի վրա խաղում եյին մանուկները: Տանը, սեղանի շուրջ, գյուղացիք թվով տասնեհինգ հոգի, ճաշում եյին: Պետիկին ել հոր հետ ճաշի նստեցրին: Հորն ասացին:

— Մենք միասին ենք ուտում, միասին ել աշխատում: Ունեցածներս չենք բաժանում: Թե՛ մի փորձանք ե պատահում, բոլորս մեկտեղ ոգնուլթյան ենք հասնում:

Հայրն ասում է գյուղացիներին:

— Ինձ ել ընդունեցե՛ք ձեր կոմմունան, մենակ ապրելն ինձ համար ծանր է: Յես ել կաշխատեմ ձեզ հետ բոլորի ոգտին:

Գյուղացիք համաձայնեցին: Պետիկը տաք կոշիկներ չուներ, վոր ձմեռը դպրոց գնար: Մայրիկ ել չուներ:

Պետիկը մի բարակ ու կեղտոտ վերնաշապիկ եր հագել: Կոմմունան Պետիկին կոշիկներ, նոր շապիկ ու վարտիկ տվեց իր պահեստից:

Հետո Պետիկը հարցրեց հորը.

— Ապի, բաս ուր ե կոմսունան:

Հայրն ասաց.

— Կոմսունան հենց այն ե, վոր մարդիկ միա-
սին են աշխատում և միմյանց ոգնում, ինչպես
յեղբայրներ:

— Եթեկուրսիա գնացեք դեպի գյուղատնտեսական մոտակա կոմ-
սունան կամ արտելը և ծանոթացե՛ք նրանց կյանքին և աշխատանքին:

96. Մանկական Ինտերնացիոնալ.

Յերգով շարժվենք մենք մանուկներս—
գնանք մեր տունը մանկական.
Թռչնի յերգի պես տարածվեն թո՛ղ
յերգերը մեր—թող թրուվրոն:

Ահա շողում ե արեգակը,
այգում փրվել են կանաչներ.
Թռչունն իր յերգը ըսկըսել ե.
ցողով ծածկվել են տերևներ:

Մեր թույլ վոտերը միշտ բայում են,
մանուկ սրտեր ենք մենք կրում.
Դեպի ուսումնի ու գիտությունը
գնում կամքով մեր ընդհանուր:



97. Մայիսի մեկի մասին.

Մենք դասարանում ծաղիկներից ու կանաչ
ճյուղերից շղթա եյինք հյուսում: Մյուս ուր մա-
յիսի մեկն եր:

Պետք ե զարդարեյինք դպրոցը, մենք ել կար-
միր դրոշակներով մասնակցեյինք շքերթին:

— Յես մայիսի տոնը շատ եմ սիրում,—ասաց
Հրաժինը.—տաք ե, շատ ծաղիկներ կան, դրոշակ-
ներ, յերգ, նվաճ:

— Ընկեր Սոֆիկ,—ասաց Լուսիկն ուսուցչու-
հուն,—յերբ դուք սովորում եյիք, ինչպես եյիք
տոնում մայիսի մեկը:

— Մենք այդ ուր դաս եյինք սերտում. մեզ
թվանշաններ եյին դնում, պատժում, անկյանը
կանգնեցնում: Տոնի մասին—վո՛չ մի խոսք. իմ
հայրը բանվոր եր: Մի անգամ նա ինձ իր հետ
տոնելու տարավ. բանվորներն անտառում հավաք-
վել եյին իբր թե քեֆի. բայց ժողով արին. Ժո-
ղովից հետո շարքերով անցան քաղաք. նրանց դրո-
շակների վրա գրված եր՝

«Ութ ժամվա բանվորական ուր ենք պահանջում»:

Քաղաքում վոստիկանները նրանց ցրեցին:

Միքանիսին բանտարկեցին:

— Առաջ այդպես եր. Իսկ հիմա:

— Դուք ինչպես եք տոնելու մայիսի մեկը:

— Կազմեցեք տոնի ծրագիրը:

98. Տարվա ամիսները.

Մարտը տալիս է ձնծաղիկ,
ապրիլ՝ կապույտ մանուշակ,
մայիսին բացվում է վարդը,
սոխակն յերգում անուշակ:

Հունիսը մեզ խոտ է տալիս,
իսկ հուլիսը՝ առատ ցորեն.
ոգոստոսը՝ տանձ ու խնձոր,
ուրիշ շատ հասուն մրգեր:

Սեպտեմբերը մեզ տալիս է
խաղողի բոլոր տեսակը.
հոկտեմբերը՝ կարմիր գինի,
նոյեմբերը՝ բոդկ ու տակը:

Դեկտեմբերին ձյուն է գալիս,
հունվարին ծածկում սար ու ձոր,
փետրվարին սկսվում է
փոփոխակի ցուրտ ու տաք որ:

99. Չորս յեղանակ.

Թե գարուն է նաշ-նախշուն,
նա ի՞նչեր է մեզ բաշխում:

— Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,
ալ ու ալփան վարդ շաղոտ:

Թե ամառ է, շոգ ամառ,
ի՞նչ է բերում մեզ համար:

— Ցորեն, գարի ու հաճար,
ամեն հոգսի դեղ ու ճար:

Թե աշուն է պտղաբեր,

ի՞նչ է բերում մեզ նվեր:

— Նուռ, սերկեիլ, տանձ, խնձոր,
դեղձ ու խաղող մեղրածոր:

Թե ձմեռ է ցրտաշունչ,
ի՞նչ է թափում լուռ ու մունջ.
— Փաթիլ-փաթիլ փափուկ ձյուն,
արծաթի պես պսպղուն:

100. Առաջին խումբը պատրաստվում է դպրոցական ցուցահանդեսի.

Մոտ է դպրոցական տարվա վերջը՝ վրա յե
հասնում ամառվա արձակուրդը: Ամբողջ դպրոցը
ցուցահանդեսի յե պատրաստվում: Հանգիստ ու
դադար չկա: Ամեն մի խումբ ուզում է իր աշխա-
տանքը ցույց տալ: Մեր առաջին խումբը յետ չե
ձևում մյուսներից: Միքանիսը տերևներ ու ճյուղեր
են կպցնում աշնան տախտակի վրա, ուղղում են
բնության որացույցները, կավե ծեփվածքները,
մյուսները հավաքում ու դասավորում են նկարները,
վոմանք ել դարակներ են պատրաստում:

Ցուցահանդեսի յեռյակը մեզ պատվիրել է 30
դրոշակ և թղթե շղթաներ պատրաստել:

Բայց ամենից գլխավորն է՝ մեր բաժնի վերելը
մեծ ու գեղեցիկ տառերով գրել:

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԿ


— Դուք ել ցուցահանդես կազմակերպեցեք:
— Հրավիրեցեք գյուղացիներին:

101. Լենինյան անկյունը ցուցահանդեսում.

Մեր ցուցահանդեսի ամենագեղեցիկ մասը լենինյան անկյունն է։ Լենինյան անկյունը կազմակերպող յեռյակը ցուցահանդեսից առաջ բոլոր դասարաններում հայտարարություններ էր կախել.

«ՀԱՎԱՔԵՑԵՔ ՈՒ ԴՊՐՈՑ ԲԵՐԵՔ ԱՄԵՆ ԻՆՉ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ».

Բերում էին պատկերներ, նկարներ՝ լրագրերից ու գրքերից հանած, փոտանավորներ, իրենց գրած-



ները Լենինի մասին։ Մի քանիսը Լենինի մասին գրքեր էին բերել։ Մեկն էլ Լենինի արձանն էր բերել.

Անկյունում Լենինի պատկերներն էին. Լենինը յերեխա ժամանակ, Լենինը ճառ ասելիս, Լենինը դադաղում, թաղումը և ուրիշ նկարներ. Մեծ աշակերտները մի պլակատ էին կախել, վրեն գրված էր.

ԼԵՆԻՆԸ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՎ ԲԱՐԵԿԱՄՆ Ե.
ՄԵՆՔ ՉԵՆՔ ՄՈՌԱՆԱ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ.
ԼԵՆԻՆԸ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ Ե.

Ամբողջ անկյունը կանաչ ճյուղերով էր զարդարված, իսկ մեջտեղը կախած էր Լենինի պատկերը կարմիր ու սև կտորից շինած շրջանակի մեջ.

102. Առաջին խումբը դպրոցական ցուցահանդեսում.

Վերջապես ցուցահանդեսը պատրաստ է։

Կեդանի անկյունը առաջվա պես նախասենյակում թողինք։ Դասարանից դուրս բերինք սեղանները, պատերը սրբեցինք, հատակը մաքուր լվացինք։ Պատերի մոտ սեղաններ դրինք։

Դժվար է մեր դասարանները ճանաչել. մի անկյունից մյուսը ձգված են գունավոր շղթաները, պատերի վրա կարմիր դրոշակներ են ամրացրած։

Մեր խմբին շատ լավ տեղ են տվել ձախ անկյունում, մենք վերևը մեծ տառերով գրեցինք—

I ԱՍՏԻՃԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԻ

Պատի վրա ամրացրած են մեր լավ նկարները, տախտակները, պլակատները, սրանց տակը, սեղանների ու դարակների վրա դարսած են մեր տետրերը, կավի ծեփվածքները և ուրիշ աշխատանքներ։

Ուզում էինք Լենինի պատկերն էլ կախել, բայց մեզ ասացին, փոր ափելի հարմար է տեղավորել լենինյան անկյունում. մենք համաձայնեցինք։

— Դուք ել տարեկան ցուցահանդես կազմակերպեցեք։

— Գրեցեք այդ ցուցահանդեսի մասին։

ԱՄԱՌԸ ՄԵԶՆՈՒՄ

103. Յե՞րբ ե յիևում.

Արևն ե այրում,
խոտը չորանում,
ցորենը հասնում,
հասկերը լցնում:
Այս յե՞րբ ե լինում:

104. Ինչ պետք ե անել ամառը երսկուրսիայի
ժամանակ.

1. Հունիսի սկզբներին դիտեցե՛ք դարու և ցորենի հասկերը: Վճրն ավելի շուտ կհասունանա:
 2. Յե՛րբ սկսեցի՛ք ցորենից հեղի պատրաստել:
 3. Ի՞նչ թռչունների ձայներ եք լսում դաշտում.
 4. Տեսե՛ք՝ ինչ աշխատանքներ են լինում դաշտում և նշանակեցե՛ք այդ աշխատանքների ժամանակը:
 5. Փորձեցե՛ք ճանաչել ձեզ պատահած բույսերը:
 6. Հավաքեցե՛ք այդ բույսերը և չորացրե՛ք:
-

105. Վորտեղ յե՛վ ինչպես պիտի լողանալ.

Զլողանա՛ք կանգնած, նեխած ու պղտոր ջրում.
ընտրեցե՛ք մաքուր ու պարզ ջուր:
Գարնան սկզբին, յերբ ջուրը դեռ շատ սառն ե,
չլողանա՛ք:

Զլողանաք նաև աշնանը, յերբ ջուրը նորից սա-
ռում է:

Զլողանաք առավոտը՝ արևը ծագելուց առաջ և
յերեկոյան, յերբ ողը խոնավ է լինում:

Յերկար լողանալը փաստակար է. 10—15 րոպե
ջրում մնալը բավական է:

106. Առողջության գաղտնիքը.

Դեռ արևը չծագած՝
յես շորերս եմ միշտ հագած.
պիոններ եմ յես զգաստ
ու իմ գործին «Միշտ պատրաստ»:

Յես ինձ համար առանձին
ունեմ փոշի ու վրձին.
լվանում եմ ամեն ուր
բերան, ատամ, կամավոր:

Պիոններ ենք. մեզ պարծանք
ամենորյա խաղ, մարզանք.
քայլերթում ենք՝ մեկ, յերկու,
հետևելով մեկ մեկու:

Ծագեց, կանչեց ալ արև.
«Պիոններն ենք, ձեզ բարև.
ջրվեժի տակ լողացեք,
շողբերիս տակ շողացեք»:

107. Արեւ որերը մի՛ կորցնեք.

Արևը շատ առողջարար է մարդու համար:

Բացի ջերմությունից արևի շողերը մարդուն
ամրացնում են: Շատ հիվանդություններ արևով
են բժշկում:

Հիվանդները արևի վաննաներ են ընդունում:
Ամառը ամրացրեք ձեր մարմինը արևով:
Աշխատեք միշտ արևի տակ լինել:

108. Ամառը գյուղում.

Առաջին անգամ եր Գարիկը գյուղ յեկել այս
ամառ: Չանձրանում եր, չեր իմանում՝ ինչ անի:
Շարունակ կարդալ չեր լինում. ընկերներ չուներ,
վոր խաղար, քամի չկար, վոր փռանը բաց թողներ:

Անցավ մի շաբաթ. Գարիկը ել չեր ձանձրա-
նում.—այնքան գործ ուներ: Գյուղում նոր ըն-
կերներ է ճարել. մեկ տեսնում ես նրան այգում,
ծառի ճյուղերի վրա նստած որորվում է կամ
պտուղներ հավաքում. մեկ՝ անտառում պաղ աղ-
բյուրների ջրերով է զվարճանում. գետափին՝ ձուկ
է վորսում կամ լողանում. մեկ ել ընկերների հետ
բանջարանոցում յեռանդուն կերպով քանդում է,
փորփրում, առուններ փորում, չորացած տունկերը
ջրում:

109. Բագրատը գյուղում.

1.

Իմ հայրը բանվոր եր. մենք ապրում էյինք Թիֆ-
լիսում. ամառները գալիս էյինք մեր գյուղը:

Մի անգամ հորեղբայրս ասաց.

— Բագրատ ջան, արի՛ քեզ տանեմ սարը, Վառո
նանի մոտ:

Գնացինք. նախ շատ ուրախացավ:

Հորեղբայրս մի գառ մորթեց, մաշկեց:

— Դու եստեղ կաց, Բագո՛ւ,— ասաց հորեղբայրս,—

մտիկ արա, վոր շները միսը չտանեն, յես կրակը
թեժացնեմ, խորոված անեմ:

Միսը դրած եր բարձր սալքարի վրա, իսկ ներքին ընկած եր փորոտիքը: Փայտը ձեռս առա, կանգնեցի, աղիքներն եյի քաշքշում. մեկ ել 4-5 շուն վրա տվին այդ փորոտիքին: Շատ վախեցա. սկզբում ձայնս դուրս չեր գալիս. հետո բղավեցի: Հորեղբայրս հասավ ու չոմբախով շներին յետ տվեց: Շները փախան:

— Վայ, քոռանամ,— գոչեց նանը վրանից դուրս գալով,— երեխես վախեցավ. սպրդնել ա: Ա՛ռ, ան, քեզ մատաղ, միքիչ ջուր խմի:

— Չե, ենքան ել չվախեցա... կմկմացի յետ: Դրանից հետո շների հետ շատ զգուշ եյի:

2.

Մյուս որը Վառո նանը խնոցի հարեց. ինձ նստացրեց խնոցու վրա ու յերգեց.

«Հարի, հա հարի, խնոցի,
մեջդ ե բարի, խնոցի»:

Խնոցու վրա շատ լավ եյի ձոճվում: Բավականին հարելուց հետո նանն ինձ իջեցրեց. բաց արեց խնոցին, նայեց:

— Բազո՛ ջան, ինչ կարագ է, ձեր Թիֆլիսումը հո եսպես կարագ չես ուտում. դե, հացդ բեր՝ յեղապատառ տամ:

Հաց ու կարագ կերա, թան ել խմեցի. շներն եղտեղ եյին. խնոցին շրջապատած պոչերն անհանգիստ շարժում եյին: Վառո նանը գուռը թան ածեց.

— Դե լակեք:

Շներն սկսեցին ազահ լակել թանը:

— Սարի շներ են, կոպիտ են, բալա՛ ջան,— ասաց նանը.— ձեր Թիֆլիսի շների պես բաղաքավարի չեն. Սրանց հետ միշտ պետք ե փայտը ձեռիդ պահես:

3.

Սարում հովիվների հետ յես գնում եյի հանդը: Վրաններից շատ հեռանում եյինք: Հովիվը սրինգ եր ածում, վոչխարները հանգիստ արածում եյին. հետո նա սրնգի յեղանակը փոխում եր, ու վոչխարները գնում եյին դեպի աղբյուրը՝ ջուր խմելու:

Կեսորին բերում եյինք վրանների մոտ, վոր վոչխարը կթվի:

Այդտեղ յես մնացի յերկու շաբաթ. հետո վերադարձանք Թիֆլիս. շատ շոգ եր. յես միշտ հիշում եյի սարի հովն ու սառը ջուրը:

110. Հնարագետ Հաւոն

Համոն նստել եր եշին: Ինչ անում եր, չեր անում, եշը տեղիցը չեր շարժվում: Տեսավ՝ հնար



չկա, իջավ, մի գազար գտավ, կապեց մտրակի ծայրից, նստեց ու մտրակը մեկնեց այնպես, վոր գազարը կախ ընկավ եշի դնչի դեմ: Եշը ուղեց

ուտի՝ չհասաւ. շարժվեց, գազարն եւ շարժվեց, և եշը սկսեց վազ տալ, վոր հասնի գազարին:

111. Ձուր ծախողը.

Իմ կուլայով այս պուճուր
Ղուր եմ ծախում, սառը Ղուր.
Ղուր գնեցեք, սառը Ղուր
Իմ կուլայից այս պուճուր:

*
* *

Կարմիր բանակը ամառանոց եր յեկել: Կարմիր բանակայինները ապրում էին սպիտակ վրաններում: Վրանների առաջ ծաղիկներ էին ցանել, լողունգներ գրել՝ «Կեցցե ԽՍՀՄ». հեծելագունները տեղավորված եր ամենածայրը:

— Ձիերն առանձին ծածկի տակ էին:

— Աշոտ, արի գնանք ձիերը տեսնենք, — ասաց Գագիկը:

— Գնանք:

Գնացինք. ձիերը յերկու շարքով կանգնած էին կողք-կողքի: Ամեն մեկն իր առանձին մսուրից կանաչ խոտ եր ուտում, փռչնացնում:

— Ե՛յ, ի՞նչ եք ուզում:

Յետ նայեցինք, տեսանք մի մեծ կարմիր բանակային գլխարկը յետ դրած, կռները քշտած, ցախավելը ձեռքին սրբում եր:

— Վոչինչ, յեկել ենք ձիերը տեսնենք, — ասացինք վախենալով:

Ուզում էինք փախչենք, բայց նա ժպտաց:

— Լավ, յեկեք նայեք. եսա Ղուրն եմ առնելու. միասին կգնանք:

Մտանք ծածկի տակ. Վոճրքան ձի կար, գանազան գույնի՝ սպիտակ, սև, կարմիր:

Մեկ-մեկ դուրս հանեց ձիերը, միքանի բանակայիններ յեկան, նստեցին, տարան:

— Ես յերեխաներին եւ նստացրեք, թող սովորեն:

Մեզ նստացրին ձիերին. բռնեցինք ձիերի բաշերից, քշեցինք դեպի գետը: Այնտեղ կարմիր բանակայինները դուլերով Ղուր էին ածում ձիերի վրա, խողանակներով մաքրում. ձիերի մարմինները փայլում էին, ձիերը փնչացնում էին:

Յերևի շոգ որին լողացնելը ձիերին դուր եր գալիս:

Մենք ոգնում էինք կարմիր բանակայիններին:

Ձիերը լողացրինք, պրծանք, յետ բերինք. շատ լավ եր:

— Կարելի՞ յե՝ եզուց եւ գանք, — հարցրինք:

— Յեկեք, ձեզ մատաղ, — ասաց մեծ կարմիր բանակայինը. — ուզում եք՝ ամեն ուր յեկեք — ես աշխարհը վոր կա, ձեզ համար ե:

— Եթեկուրսիա գնացեք կարմիր բանակայինների մոտ և ծանոթացեք նրանց կյանքին:

— Ձեր գյուղացիներից բանին են կարմիր բանակում յեղել:

— Իմացեք նրանցից կարմիր բանակի մասին:

112. Կալսելը.

Յորենի խուրձերն իրար վրա դարսել էինք, կալը սրբել, մաքրել:

— Դե, յերեխեք ջան, — ասաց հայրս, — քանի լավ որեր են՝ կալսենք, տեղավորենք ցորենը, թե չե անհաց կոտորվեցինք:

Յես, Տիգրանը, Սիրուշը, Չաբել հարսը վրա ընկանք, խուրձերը քանդեցենք, կալումը փռեցինք, հետո կամերը մարագից հանեցինք, յեզները լծեցինք ու սկսեցինք պտտել: Առաջի կամին ձին լծեցինք, յես նստեցի եղ կամին ու սկսեցի շուտ-շուտ քշել: — Ճամպան, ճամպան, — ճչում էյի յես ուրախ-ուրախ:

— Կամաց, կամաց, ձիուն չմխասես, մի շտապի, դեռ ենքան կկալեսս վճռ, — ասաց մայրս: Սիրուշն ու Տիգրանն աշխատում էյին առաջ-կտրուկի տալ: Ամեն մեկն իր կամն եր առաջ գցում:

— Դեհ, խաղը վերջացրեք, — ասաց հայրս, — հանգիստ քշեք, քյուլաշը շաղ միք տա:

Իրիկունը կալը կալսած եր, և հերս ու Չաբել հարսն սկսեցին բամուռն տալ...

Մենք ել մորս հետ կալը ավելեցինք:

— Դուք խնչպես եք կալսում:

— Ի՞նչպես կարելի յե ավելի հեշտ ու արագ կալսել:

113. Հո՛, հո՛, յե՛զ ջան.

Հո՛, հո՛, յե՛զ ջան, հո՛ կալ արա՛,
կալիդ դուրբան, հե՛յ ընկեր.
հո՛, կալ արա, մի հալ արա,
թեղը դիզենք, ջան ախպեր:

Իրիկուն կուգա, մութը կընկնի,
ասող ու լուսին կբացվին.
հովիկ կուգա, ցուրտը կընկնի,
հո՛, հո՛, մեռնեմ քո ջանին:

114. Զրադացում.

Յեղիշն ու յես ջվալը լիքը ցորենը դրինք եշին, տարանք ջաղաց: Զաղացի բակը լիքը սալեր էյին. գյուղացիք վորը ալյուրը սալին եր դնում, վորը



ցորենը իջեցնում: Մեր ջվալը դրինք հերթի. յես վազեցի ներս՝ տեսնեմ վո՞նց են աղում: Հե՛չ ներսը չէյի տեսել. ջաղացում շատ մութ եր. վախեցա, մեկ ուզեցի դուրս փախչեմ, մեկ ել ասացի՝ չե՛ տեսնեմ ես վո՞նց ե շինած:

Մութ անկյունից ուժեղ աղմուկ եր լսվում. ողը լիքը փոշի յեր. կարծես ալյուրը գլխիդ էյին թափում. շունչս կտրվում եր: Կամաց-կամաց մոտեցա եմ տեղին, վորտեղից աղմուկ եր լսվում:

Անկյունում, առաստաղի մոտ, բերանը լայն, տակը նեղ մի արկղ եր շարժվում. նրա միջից ցորենը թափվում եր կլոր ջաղացաքարի անցքի մեջ:

Յորենը այդ անցքով ընկնում եր մյուս անշարժ
քարի վրա: Վերևի քարը պտտվում եր, քսվում ներ-
քևինին, ցորենն ալյուր դարձած թափվում եր կող-
քի փայտի մեծ տաշտը: Շատ հետաքրքիր եր, յեր-
կար նայեցի:

Յերբ մեր հերթը հասավ, աղացած ալյուրը յես
եյի շվալը լցնում:

Յերբ դուրս յեկանք ջաղացից, ամբողջովին
սպիտակել էյինք:

— Մի ժամում պառավեցիր, սիպտակեցիր, —
ասաց Յեղիշը:

— Բա դ՞հու...

Իրար տեսանք, ծիծաղներս բռնեց:

Բարձեցինք ալյուրը ու յետ դարձանք գյուղ:

— Դուք ջրաղացում յեղել եք:

— Եթե ուրիշ գնացեք դեպի ջրաղաց:

115. Ջաղաց.

Յերեք-չորս հատ
ջաղացաբար
պտտվում են,
հա պտտվում...
դուրսը, ներսը
հարա-հրոց,
սայլի ճռինչ,
քարի գրոռոց:
Մինը բեռը
ներս ե կրում,
մինը նրան
դուրս ե բերում:

Գնաթաթախ
ջաղացպանը
ալրաթաթախ՝
ալրատանը
բարը տեղից
իջեցըրած,
նրա տակը
վերև դարձրած,
հա տալիս ե
քարին մուրճը
ու կայծեր ե
թափում շուրջը:

116. Չեղավ.

Գոհարիկը տեսավ, վոր փոքրիկ յեղբայրը յեր-
կու խոշոր տանձ ունի ձեռին, կանչեց ու ասավ.

— Գիգուշ, տես՝ ինչ ե գրած գրքիս մեջ մի
լավ տղայի մասին:

Գիգուշը պատմություններ շատ եր սիրում.—
կարդա՛ լսեմ,— ասաց նա:

Գոհարիկն սկսեց.

Կար, չկար, մի փոքրիկ տղա կար՝ Մագերը գան-
գուր, թշերը թխլիկ, անունն ել Գիգուշ:

— Գիգուշ,— ուրախացավ յեղբայրը:

— Հա: Նա ենքան բարի յեր, ենքան բարի: Մի
որ մայրիկը նրան յերկու տանձ տվեց, մեծ-մեծ
տանձեր, փափուկ, բաղցր, ինչպես շաքար:

— Եսպես, հա,— ցույց տվավ Գիգուշն իր տան-
ձերը:

— Հա: Տղան գնաց բույրիկի մոտ ու ասավ.—
Գոհարիկ ջան, ես մեծ տանձը քեզ, պստիկը՝ ինձ:

— Եհ, եդ ինչ պատմություն ե, դրո՞ւստ եդպես
ե գրված.— հարցնում ե Գիգուշը:

— Հա,— պատասխանեց Գոհարիկն ու սպասում
եր, թե ինչ կանի յեղբայրը:

Գիգուշն սկսեց մտածել:

Մտածեց, մտածեց ու ասավ.

— Գիտե՞ս ինչ, Գոհարիկ. յերևի դու սխալ ես
կարդում. Գիգուշը փոքր տանձը տվեց քեռի:

Ասավ ու կծեց մեծ տանձը:

- Տիրիկ, ինչո՞ւ յես յեկել:
- Յես... յես... ուզում եմ դառնալ...
- Ի՞նչ դառնալ:
- Պիոներ:
- Քանի տարեկան ես:
- Ութ:
- Դու դեռ փոքր ես:
- Շատ պետք է սպասեմ:
- Յերկու տարի:
- Յերկու տարի, եղբան շատ. իսկ հիմա ինչ անեմ:
- Հոկտեմբերիկ դարձիր:
- Ե, լավ, ի՞նչպես դառնամ:
- Այ, Վարդուշը հոկտեմբերիկ ե, նրանից իմացիր:

117. Հոկտեմբերիկ

Նոր ծլած, ծաղկած իմ Հոկտեմբերիկ,
մեր լեն որերի դու կարմիր ծաղիկ,
գիշերը անցավ, արև ե հիմա
մեր սավետական աշխարհի վրա:

Ձարթիր, իմ անուշ, իմ Հոկտեմբերիկ,
մեր լավ որերի դու կարմիր ծաղիկ:

Քո հայրը ընկավ դաժան պայքարում,
վոր դու բացվեցիր վորպես նոր Գարուն.
քո հայրը յեղավ դիրքերում համառ,
վոր մի նոր արև բացվեք բեզ համար:

Ձարթիր, իմ անուշ, իմ Հոկտեմբերիկ,
մեր լավ որերի դու կարմիր ծաղիկ:

Ինչ կա աշխարհում լավ ու գեղեցիկ,
բեզ համար լինի, բեզ համար բացվի.
որեք արևոտ ու վարդեր, վարդեր,
զարթիր, իմ անուշ, Գարուն ե արդեն:

Յ Ա Ն Կ

Ձ Մ Ե Ռ Ը Մ Ե Ջ Ն Ո Ւ Մ		Եջ	Եջ
1. Տոն,	5	29. Ձմեռ,	29
2. Գրագետը,	5	30. Ջյունը,	29
3. Ի՞նչպես յես կարդալ սովորեցի	6	31. Ձմռան երսկուրսիային,	30
4. Ի՞նչ կխնդրեք գիրքը,	7	32. Յեղեկին (վոտանավոր),	31
5. Հայրը և վորդիները,	8	33. Ծիտիկների սեղանը,	31
6. Ի՞նչ կարող ե անել կուլեկտիվը,	8	34. Գայլերի վտանգը,	32
7. Ամեն մեկն աշխատում է		35. Իմ սղղանը,	33
բոլորի համար,	10	36. Ցրտատար ականջները	34
8. Մեր գոմը,	12	37. Հնարը,	36
9. Նոր ոգնականը,	13	38. Մըսկու դեմ,	36
10. Ընտանի կենդանիներ և		39. Ի՞նչ է անում մեր սանիտարը,	37
վայրի գաղաններ,	13	40. Բժշկի գրույցները,	37
11. Ով ինչ է ուտում,	14	41. Մեր ճաշը,	38
12. Քաջ աղան,	15	42. Ընտանիքը	40
13. Հանգստի պատմությունը,	16	43. Իմն և,	40
14. Ճախարակ (վոտանավոր)	16	44. Մեր կոոպերատիվը,	41
15. Մենակ կապրեմ,	17	45. Խելոք հաշիվ,	42
16. Գյուղից քաղաք,	19	46. Գյուղի առուտուրը,	42
17. Առաջին ձյունը,	20	47. Շարժվող տունը,	44
18. Մեր սրտատերից,	20	48. Ելկտրականություն,	46
19. Վերմակը	21	49. Դերասանները,	47
20. Մեր կազմակերպությունը	21	50. Ով է Լենինը,	49
21. Դասից ուղացող աշակերտը,	22	51. Պետյայի դրոսանքը,	51
22. Աշխենի գիրքը	23	52. Աշակերտի սրտատերից	52
23. Մարդ կսովորի, միայն թե		53. Մեր պսակը Լենինին,	52
յետանդ ունենա,	24	54. Լենինի թաղումը,	54
24. Կենդանի անկյուն,	25	55. Հունվարի 9-ը	55
25. Կարմիր բանակի տարե-		Գ Ա Ր Ո Ւ Ն Ը Մ Ե Ջ Ն Ո Ւ Մ	
դարձը,	25	56. Վերջին փաթիլները (վոտ.),	59
26. Որստերից,	27	57. Ցանքսը,	59
27. Ուրախ ձմեռը,	28	58. Չնժպղիկ (վոտանավոր),	60
28. Յերբ և լինում (վոտանավ.)	29	59. Յերբ և լինում (վոտանավ.),	60
		60. Մեր պատուհանի պարտեզը,	61

	Եջ		Եջ
61. Դպրոցի պարտեզը, . . .	61	94. Խուժանը, . . .	88
62. Ի՞նչ պետք է գիտել դարձանը, . . .	62	95. Կոմպոզիցիան, . . .	91
63. Գարուն (վոտանավոր), . . .	63	96. Մանկական Ինտերնացիոնալ (վոտանավոր), . . .	92
64. Գարուն, . . .	64	97. Մայիսի մեկի մասին, . . .	93
65. Զրվեթ (վոտանավոր), . . .	65	98. Տարվա ամիսները, (վոտան.), . . .	94
66. Առվակներ (վոտանավոր), . . .	66	99. Չորս յեղանակ, (վոտան.), . . .	94
67. Զուրը . . .	66	100. Առաջին խումբը պատրաստ- վում է դպրոցական ցուցա- հանդեսին . . .	95
68. Աշտի ձեռնափայտը, . . .	67	101. Լենինյան անկյունը ցուցա- հանդեսում, . . .	96
69. Ծառատունկը, . . .	68	102. Առաջին խումբը դպրոցա- կան ցուցահանդեսում, . . .	97
70. Մեր բանջարանոցը, . . .	69	Ա. Մ. Ա. Ռ. Ը. Մ. Ե. Զ. Ն. Ռ. Ի. Մ.	
71. Պարտեզի և բանջարանոցի ֆլաուտները, . . .	70	103. Յերբ և լինում (վոտան.), . . .	101
72. Մեր աշխատանքը, . . .	71	104. Ի՞նչ պետք է անել ամառը եքսկուրսիայի ժամանակ . . .	101
73. Պահպաններ, . . .	72	105. Վերտեղ և ինչպես պիտի լողանալ, . . .	101
74. Կոֆե ու գելագոավը, . . .	72	106. Առողջության գաղափար (վոտանավոր), . . .	102
75. Անճոռնի ճուտիկը, . . .	73	107. Արև որերը մի կորցնեք, . . .	102
76. Դժվար հանելուկ, . . .	74	108. Ամառը գյուղում, . . .	103
77. Թռչուններ, . . .	75	109. Բազրատը գյուղում, . . .	103
78. Լորիկ (վոտանավոր), . . .	75	110. Հնարագետ Համոն, . . .	105
79. Պատիկ ծիտը, . . .	76	111. Զուր ծախողը, . . .	106
80. Մեղուններ, . . .	76	112. Կալսելը, . . .	107
81. Մեղու (վոտանավոր), . . .	77	113. Հո հո, յեղ ջան, . . .	108
82. Մեղու (վոտանավոր), . . .	77	114. Զրադացում, . . .	109
83. Ընկերոջն աղատելու համար . . .	78	115. Զաղաց, . . .	110
84. Անկյունում, . . .	78	116. Զեղավ, . . .	111
85. Գորտը . . .	79	117. Հոկտեմբերիկ, (վոտանավոր) . . .	112
86. Հատիկի զարթնելը, . . .	80		
87. Հատիկ, (վոտանավոր), . . .	81		
88. Արոր, (վոտանավոր), . . .	81		
89. Պետական ապահովագրու- թյունը, . . .	82		
90. Սաբի լանջը, (վոտանավոր), . . .	83		
91. Վոչխարները, . . .	83		
92. Ինչպես մենք խուզվեցինք, . . .	85		
93. Մեր կոմպոզիցիան, . . .	86		

Այս գրքին աշխատակցել են գլխավորապես ընկ. ընկ. Սերիկը և Հ. Պետրոսյանը ինքնուրույն և թարգմանական հոգովածներով:

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Սույն դասագիրքը հրատարակվում է մի շարք ան-
նպատակ պայմաններում, վորոնք անդրադառնում են գրքի
վորակի վրա:

Ամենախոշոր թերություններից մեկն է, անշուշտ,
նկարների բացը, վոր արդյունք է գրքի հրատարակման
հապճեպության՝ առաջին խմբի պահանջներն որ առաջ
բավարարելու նպատակով:

Իբրև թերություն պետք է մատնացույց անել նաև այն,
վոր դասագրքի սկզբի հոգվածները խմբի աշակերտության
պատրաստության համապատասխան ծավալը չունեն—յեր-
կար են. համեմատաբար կարճ հոգվածներ ելին պետք
առաջին ամիսների համար:

Այդպես նաև թերություն է, անշուշտ, դասագրքում
վոտանավորների պակասը:

Դասագիրքն իր բովանդակությամբ, առաջին հոգվածնե-
րում շոշափված թեմաներով ընթերցողին ըստ յերևույթին
կարող է բարդ թվալ, աչքի առաջ ունենալով հասարակագի-
տական խնդիրները, վոր մի շարք հոգվածներում շոշափ-
ված են: Սակայն իրապես այդպես չէ. մեր հասարակական
կյանքը վերջին տարիների ընթացքում այն աստիճան ա-
ռաջ է գնացել, մեր յերեխաներն իրենց շրջապատում
այնքան են լսում ու տեսնում այդ յերևույթները, վոր այդ
հոգվածներն անբավարար չեն մնա նրանց համար:

Դասագիրքը բազմակողմանի նյութեր պարունակե-
լով՝ բազմաբովանդակ է. ուսուցչին է մնում այդ հոգ-
վածներից ընտրություն անելը:

Ընթերցողը կարող է մատնանշել աչնան վերաբերյալ
նյութերի բացակայությունը: Դրա պատճառն այն է, վոր
սույն դասագիրքը կիրառվելու յե առաջին խմբում այդ-

բնական անցնելուց հետո, այն ե՛ւ ձմռան ամիսներին:
Ըստինքյան հասկանալի չե, վոր աշնան վերաբերյալ հող-
վածներն ավելորդ կլինեյին:

Աշակերտների համար իբրեւ ընթերցանության նյութ
դասագրքում ամփոփված են նաև ամռան վերաբերյալ
նյութեր, սակայն շատ սահմանափակ չափով, դասագրքի
ծավալը չմեծացնելու նկատառումով միայն:

ՍՏ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ցերևան

1926 թ. փետրվար



ՀՀ Ազգային գրադարան



NL0935488

136

1926թ.

III

2222



ԳԻՆԸ 60 ԿՈՊ.